

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ	3
ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	10
ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	12
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՑԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	12
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	13
ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	15
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	17
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	20
ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	21
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	30
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	33
ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	35
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	36
ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	39
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ)	42
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	45
ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	50
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	59

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը (այսուհետ՝ Հաշվեքննիչ պալատ) գործում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու պահից՝ 2018 թվականի ապրիլի 9-ից: Հաշվեքննիչ պալատը ՀՀ վերահսկիչ պալատի իրավահաջորդն է:

Հաշվեքննիչ պալատն իր գործունեության առաջին տարում իրագործել է ՀՀ վերահսկիչ պալատի գործունեության տարեկան վերջին ծրագիրը:

Սույն տարեկան հաղորդումը ներկայացվում է ի կատարումն ՀՀ Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի և 46-րդ հոդվածի պահանջների: Այն պատրաստվել է՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:

Սույն տարեկան հաղորդումը հանդիսանում է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին տարեկան հաղորդումը: Այն ներկայացնում է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում 2018 թվականի շրջանակներում իրականացված հաշվեքննության վերաբերյալ աշխատանքները:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

2018 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսվել է 25 հաշվեքննություն, որից երկուսը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, Հաշվեքննիչ պալատի համապատասխան որոշումներով կասեցվել է:

Նախատեսված 25 հաշվեքննությունից 5-ն ավարտվել է 2018 թվականի ընթացքում, իսկ մյուս 20-ը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, տվյալ տարում չավարտելու կապակցությամբ տեղափոխվել են հաջորդ տարի: 2019թ. գործունեության տարեկան ծրագիր տեղափոխված 20 հաշվեքննությունից երկուսը մնում է կասեցված, 4-ը դեռ շարունակվում է, իսկ 14-ն ավարտվել է: Ավարտված 14 հաշվեքննության արդյունքները Հաշվեքննիչ պալատի համապատասխան որոշումներով հաստատվել են 2019 թվականի առաջին եռամսյակում:

Այսպիսով, 2018թ. գործունեության տարեկան ծրագրով հաստատված 25 հաշվեքննությունից 19-ն ավարտված են, երկուսը՝ կասեցված, իսկ 4-ի մասով հաշվեքննության աշխատանքները շարունակվում են: Դրանք վերաբերում են ՀՀ պաշտպանության նախարարության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Ռուս-Հայկական համալսարանի (ՌԴ հաշվիչ պալատի հետ համատեղ) և Դեղերի շրջանառության պետական կարգավորմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեության գործընթացի հաշվեքննությանը:

Ռուս-Հայկական համալսարանում (ՌԴ հաշվիչ պալատի հետ համատեղ) հաշվեքննության իրականացումը հետաձգվել է՝ նկատի ունենալով ՌԴ հաշվիչ պալատի նախագահի պաշտոնական առաջարկն առ այն, որ ՌԴ կառավարության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխություններն այդ պահին սահմանափակում են լիարժեք և արդյունավետ հաշվեքննության իրականացումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունում, «Հայաստան» համահայկական հիմնադրամում, Դեղերի շրջանառության պետական կարգավորմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեության գործընթացին վերաբերող հաշվեքննություններն իրենց բնույթով բավականին ընդգրկում են, ծավալուն և առանձնահատուկ: Օրինակ՝ պաշտպանությանն առնչվող միջոցների հաշվեքննությունն ընդգրկում է 2009 թվականից մինչև 2018 թվականի գործունեության հետևյալ առարկաները՝ ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովմանն ուղղված պետական գաղտնիք պարունակող գնումներ, արտաբյուջետային միջոցների ձևավորում և օգտագործում, ՀՀ կողմից հիմնադրված պաշտպանության ոլորտում գործող հիմնադրամների ֆինանսատնտեսական գործունեություն, իսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամի մասով հաշվեքննությունն ընդգրկում է 2015 թվականից մինչև 2017 թվականն ընկած ժամանակահատվածը: Ի դեպ, երկու դեպքում էլ՝ նախկինում այդ թեմաների նկատմամբ Վերահսկիչ պալատի կողմից վերահսկողություն չի իրականացվել: Բավականաչափ առանձնահատուկ է նաև դեղերի շրջանառության գործընթացի հաշվեքննությունը, որը նույնպես պահանջում է համապատասխան ռեսուրսներ: Նկատի ունենալով փաստերի հետազոտման, վերլուծության ու եզրահանգման միջոցով նշված հաշվեքննությունների օբյեկտիվ անցկացման օրինական պահանջը՝ Հաշվեքննիչ պալատը որոշել է դրանց իրականացման ժամկետները հետաձգել մինչև 2019 թվականի հունիսի 30-ը:

Ավարտված 19 հաշվեքննությունից մեկը վերաբերում է ԵԱՏՄ մարմիններում բյուջետային միջոցների ձևավորմանը, կառավարմանն ու տնօրինմանը, գույքի և այլ ակտիվների օգտագործմանը (միության անդամ երկրների աուդիտի բարձրագույն մարմինների հետ համատեղ):

Համաձայն «Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտ (հսկողություն) իրականացնելու մասին» Հիմնադրույթի 62-րդ կետի ԵԱՏՄ մարմիններում իրականացված արտաքին աուդիտի (հսկողության) արդյունքներով կազմված և ԵԱՏՄ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների (այդ թվում՝ ՀՀ վերահսկիչ պալատի) կողմից համատեղ որոշումներով հաստատված ամփոփիչ հաշվետվությունները ներկայացվել են Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի քննարկմանը: Հաշվետվության վավերացման գործընթացի ավարտից հետո ստորագրված հաշվետվության օրինակը Հաշվեքննիչ պալատի կողմից ստանալուն պես, այն սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողովին և կառավարությանը, ինչպես նաև կտեղադրվի պալատի պաշտոնական կայքում:

իրականացված 18 հաշվեքննության արդյունքներով Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված ընթացիկ եզրակացությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացվել են Ազգային ժողով, Կառավարություն և հաշվեքննության համապատասխան օբյեկտներին, և դրանցից 17-ը, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական և ՀՀ հրապարակային ծանուցումների ինտերնետային կայքերում: Քանի որ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և հիմնարկներին պատկանող էլեկտրոնային շտեմարանների հաշվեքննությունն իր մեջ պարունակում է այնպիսի տեղեկություններ, որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, այն համարվել է «գաղտնի» և չի հրապարակվել:

Կասեցվել են ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, ինչպես նաև «Ռադիոհեռուստայների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին շինարարության նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման հաշվեքննությունները: Կասեցումների համար հիմք է հանդիսացել հաշվեքննության օբյեկտների կողմից հաշվեքննողների օրինական պահանջների կատարման անհնարինությունը: Հաշվեքննիչ պալատը, ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, ՀՀ առողջապահության և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարներին, ինչպես նաև վերադասության կարգով ՀՀ Վարչապետին առաջարկել է օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել հաշվեքննության օբյեկտների այն պաշտոնատար անձանց, որոնք չեն կատարել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և հաշվեքննություն իրականացնող անձանց օրինական պահանջները:

Հինգ առանձին ուղղություններով Հաշվեքննիչ պալատը եկել է հետևության, որ կատարված որոշ արարքներ պարունակում են առերևույթ հանցագործության հատկանիշներ, և այդ նյութերը համապատասխան որոշումներով ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն: Դրանցից երկուսը վերաբերում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության («Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի մասով), երկուսը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի, իսկ մեկը՝ ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի հաշվեքննություններին:

Հաշվեքննությունների շրջանակը եղել է բավականին ընդգրկուն և ներառել է սոցիալական ապահովության, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, ջրային տնտեսության, գյուղատնտեսության, պաշտպանության և անվտանգության, տնտեսական զարգացման, միջազգային համագործակցության և այլ ոլորտները:

Հաշվեքննություններն իրականացվել են «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հաշվեքննողները կիրառել են հաշվեքննության

«Ֆինանսական», «համապատասխանության» և «կատարողականի» տեսակները՝ օգտագործելով հաշվեքննության համար նախատեսված բոլոր ընթացակարգերը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական	9
Համապատասխանության	14
Կատարողականի	8
Համակցված /Ֆինանսական, համապատասխանության/	7
Համակցված /կատարողականի, համապատասխանության/	3
Համակցված /Ֆինանսական, համապատասխանության, կատարողականի/	2

Նախատեսված 25 հաշվեքննությունից երեքի իրականացման պահանջն ամրագրված է «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրում՝ որպես 2018 թվականի համար հատուկ նախապայման: Մասնավորապես, համաձայնագրով 2018 թվականի համար Հաշվեքննիչ պալատի մասով սահմանվել են հետևյալ պահանջները.

- 2017 թվականի պետական բյուջեի ծախսերի առնվազն 17.5 տոկոսը ISSAI 100, ISSAI 200 և ISSAI 400 ստանդարտներին համապատասխան ենթարկել «Ֆինանսական» և «համապատասխանության» հաշվեքննության:
- Նախորդ երկու տարիներից տարբերվող ոլորտներում ISSAI 100 և ISSAI 300 ստանդարտներին համապատասխան իրականացնել «կատարողականի» հաշվեքննություն:
- Պահանջվող հաշվեքննությունների արդյունքները ներկայացնել Ազգային ժողով և դրանք հրապարակել Հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում:

Վերոգրյալ բոլոր պահանջներն ամբողջությամբ կատարվել են միջազգային ստանդարտներին համահունչ՝ 2017 թվականի պետական բյուջեի ծախսերի 17.5 տոկոսի փոխարեն իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն 22 տոկոսի նկատմամբ:

2018թ. գործունեության տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների միջոցով բացահայտվել են բազմաթիվ անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ:

Արդյունքում, բացահայտված խնդիրների, անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացման և բացառման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման համար հաշվեքննության, ստուգման

օբյեկտներին, ՀՀ կառավարությանը և այլ մարմիններին ներկայացվել են ընդհանուր թվով 359 առաջարկություններ, որոնք բնութագրական հատկանիշով կարելի է բաժանել երեք տեսակի՝ համակարգին միտված, արդյունքին միտված և խնդրին միտված:

Համակարգին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու կառավարման, ֆինանսական, իրավական համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացումը: Հաշվեքննիչ պալատի կողմից 2018 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է համակարգին միտված 44 առաջարկություն:

Արդյունքին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու ծրագրերը և ծառայությունները նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար: Հաշվեքննիչ պալատի կողմից, 2018 թվականի տարեկան ծրագրով, իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է արդյունքին միտված 128 առաջարկություն:

Խնդիրների բացահայտմանը և լուծմանը միտված առաջարկությունների նպատակը հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացումը կամ շտկումն է: Հաշվեքննիչ պալատի կողմից 2018 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել են խնդիրներին միտված 187 առաջարկություններ:

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների արդյունքներով տրվել են «հաշվեքննության կարծիքներ», մասնավորապես՝

- տրվել է 3 դրական եզրահանգում, քանի որ ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,
- 9 ոչ լիարժեք եզրահանգում, քանի որ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Բացասական եզրահանգում չի տրվել, քանի որ չեն հայտնաբերվել էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն եղել, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված չեն եղել:

Կատարողականի հաշվեքննություններով ներկայացվել են «տնտեսման» և(կամ) «օգտավետության» և(կամ) «արդյունավետության» սկզբունքների պահպանման վերաբերյալ հաշվետվություններ:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

Տնտեսման	4
Ծախսային արդյունավետության	2
Նպատակային արդյունավետության	5

Ընթացիկ եզրակացությունները կազմվել են՝ հիմք ընդունելով հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության (ստուգման) արդյունքների վերաբերյալ արձանագրությունները: Բոլոր ուղղություններով կազմվել է հաշվեքննության (ստուգման) 108 արձանագրություն, որից 14-ը գաղտնի: Դրանք ամբողջությամբ, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, ներկայացվել են հաշվեքննության (ստուգման) օբյեկտների ղեկավարներին: Վերջիններիս կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ, որոնց մեծ մասը Հաշվեքննիչ պալատի կողմից չեն ընդունվել, քանի որ եղել են չհիմնավորված և չփաստարկված կամ պարզապես իրենցից ներկայացրել են մեկնաբանություններ և բացատրություններ արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունված առարկությունները հաշվի են առնվել ընթացիկ եզրակացությունների մշակման գործընթացում:

Հաշվեքննիչ պալատն, առաջնորդվելով ISSAI 20 ստանդարտով նախատեսված թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներով, հաշվեքննության (ստուգման) օբյեկտների ղեկավարների բոլոր առարկությունները և բացատրությունները կցել է ընթացիկ եզրակացություններին՝ դրանք դարձնելով հրապարակային: Հաշվեքննողների գործողությունները հաշվեքննության (ստուգման) օբյեկտների կողմից չեն բողոքարկվել:

Ինչպես բոլոր ընթացիկ եզրակացությունները, այնպես էլ՝ սույն տարեկան հաղորդումը, գերծ է օրենքով գաղտնիք պարունակող և անհատական տվյալներից:

2018 թվականի տարեկան ծրագիրը Հաշվեքննիչ պալատը կատարել է Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Հաշվեքննիչ պալատը որոշ դեպքերում պայմանագրային կարգով հաշվեքննության գործընթացում ներգրավել է համապատասխան բնագավառի, ինչպես նաև հաշվեքննության և ստուգման վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետներ և փորձագետներ:

Հաշվեքննության ողջ գործընթացը, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է: Հաշվեքննության արդյունքները ձեռք են բերվել անաչառ և համակողմանի տեղեկատվության և փաստերի հիման վրա: Տրված բոլոր գնահատականները հիմնված են պատշաճ ապացույցների վրա: Հաշվեքննիչ պալատի և հաշվեքննության որակն ապահովվելու նպատակով Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից ապահովվել են հաշվեքննության գործընթացում գործող հիերարխիկ շղթայի (*հաշվեքննող - հաշվեքննության առաջադրանքի ղեկավար -*

համակարգող անդամ - Հաշվեքննիչ պալատ) համար նախատեսված ներքին հսկողության բոլոր ընթացակարգերը:

Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում ամբողջությամբ հետևել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված «քաղաքական չեզոքության» սկզբունքի պահանջներին: Սույն տարեկան հաղորդումը, ինչպես նաև բոլոր ընթացիկ եզրակացությունները զերծ են որևէ «որակումից», որը կարող է վերաբերել բացահայտված անհամապատասխանություններին և խեղաթյուրումներին, ինչպես նաև զերծ են որևէ «կանխատեսումից», որը կարող է առնչվել բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների հետևանքներին:

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2017 թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը, որը հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի մայիսի 21-ի թիվ 3/4 որոշմամբ: 2018 թվականի հունիսի 13-ին Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողովում ներկայացրել է ՀՀ կառավարության 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման մասին ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը: Հաշվեքննիչ պալատի եզրակացությամբ արձանագրվել է 8 հիմնական խնդիր և դրանց մասով ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ:

Դեռևս 2008 թվականին պալատն առաջարկել էր պետական բյուջեում արտացոլված բոլոր վարկային և դրամաշնորհային միջոցները շրջանառել գանձապետական միասնական հաշվով, ինչի արդյունքում արդեն 2010 թվականից վարկային և դրամաշնորհային միջոցների մի մասը սկսեց շրջանառվել գանձապետական համակարգով: Հաշվետու տարվա դրությամբ բոլոր վարկային և դրամաշնորհային միջոցները շրջանառվում են գանձապետական համակարգով:

Սակայն, պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների ֆինանսական հոսքերի մի մասի շրջանառությունը մինչ օրս չի տեղափոխվել գանձապետական համակարգ: Խոսքը ՀՈԱԿ-ների, հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների մասին է:

Հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկվել է միջոցառումներ ձեռնարկել «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի ապահովման համար ՀՈԱԿ-ների, հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների հաշիվները առևտրային բանկերից գանձապետական միասնական հաշիվ տեղափոխելու մասով: Ներկա դրությամբ խնդիրը լուծված է մասնակի, մասնավերապես ՊՈԱԿ-ների հաշիվները տեղափոխվել են գանձապետարան, իսկ ՀՈԱԿ-ների, հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների հաշիվները՝ ոչ:

Հաշվեքննիչ պալատն անդրադարձ է կատարել պետական բյուջեի հիմքում ընկած ոչ ֆինանսական ցուցանիշներին: Մասնավորապես, ծախսային միջոցառումներից 17.4%-ի գծով ոչ ֆինանսական ցուցանիշ ընդհանրապես սահմանված չի եղել, իսկ 59.3%-ի գծով սահմանված է եղել միայն մեկ տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշ (հիմնականում քանակական), ինչն անբավարար է նշված միջոցառումների արդյունքների լիարժեք գնահատումն ապահովելու համար:

Հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկվել է սահմանել՝ ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն, ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային առավել լիարժեք կազմ, և բարձրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորման և կատարման գործընթացի նկատմամբ հետևողականությունը: 2019 թվականից սկսած տեղի է ունեցել անցում ծրագրային բյուջետավորման:

Եզրակացությամբ արձանագրվել էր օրենսդիր մարմնի արտաբյուջետային հաշիվների պլանավորման նկատմամբ բավարար վերահսկողության հնարավորություն բացակայության մասին, քանի որ այդ միջոցները տնօրինող գերատեսչություններն իրենք են որոշում իրենց արտաբյուջետային մուտքերը և դրանց հաշվին իրականացվող ելքերը: Այս մասով առաջարկվել է ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ներառել արտաբյուջետային մուտքերն ու ելքերը: Այդ կապակցությամբ 2018 թվականին ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվել են միջոցառումներ և արտաբյուջետային միջոցները ներառվել են «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում:

Ըստ Հաշվեքննիչ պալատի եզրակացության, պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ արտացոլված թվերը եղել են արժանահավատ, իսկ «2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները՝ կատարված:

ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ընթացիկ բոլոր եզրակացությունները Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվել են Ազգային ժողով, կառավարություն և հրապարակվել Հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում: Հաշվեքննիչ պալատը տարեկան հաղորդման մեջ արտացոլել է հաշվեքննության առավել ուշագրավ արդյունքները:

Տվյալ մոտեցմամբ Հաշվեքննիչ պալատը նպատակադրվել է սույն տարեկան հաղորդումն անհարկի չձանրաբեռնել, այն դարձնել մատչելի, դրանում ներառել միայն էական նշանակության տեղեկություններ:

Հաշվեքննիչ պալատի դատողություններով սույն տարեկան հաղորդումը տալիս է բավարար տեղեկատվություն Ազգային ժողովին և հանրությանը այն մասին, որ Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացրել է օրինականության և տնտեսման, նպատակային ու ծախսային արդյունավետության սկզբունքների համաձայն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		Ստուգման օբյեկտները	
ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե		«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ	
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
06.07.18-04.03.19թթ.		01.01.17-30.09.18թթ.	
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում		Իրականացվել է ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
4	7	14	
Հաշվեքննության կարծիք			
Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «դրական եզրահանգում» կարծիք:			

Չեն պահպանվել կատարողականի հաշվեքննության տնտեսման և նպատակային արդյունավետության սկզբունքները:

Առավել ուշագրավ փաստեր

- «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ն ուսանող-օդաչուների ուսումնավար-ժանքային թռիչքների իրականացման համար «Մեյն Ավիեյշըն Տեքնիքս» ՍՊԸ-ից վարձակալել է «DIAMOND 40» տիպի օդանավ: Նշված օդանավը «Մեյն Ավիեյշըն Տեքնիքս» ՍՊԸ-ն ներմուծել է դեռևս 2013 թվականին, որի մաքսային արժեքը կազմել է 86.2 մլն դրամ՝ ներառյալ հարկերը, որն, ըստ էության, տվյալ օդանավի շուկայական արժեքն է: 2013 թվականից սկսած այդ օդանավի վարձակալության համար «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ն վճարել է շուրջ 600 մլն դրամ վարձավճար, այսինքն՝ օդանավի արժեքի շուրջ յոթնապատիկի չափով:
- Համապատասխան հսկողական մեխանիզմների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում տիրապետել ավիաընկերությունների կողմից իրականացված գործունեության փաստացի ծավալներին, ինչը բարձրացնում է հայտարարագրված հասույթների արժանահավատության ռիսկը: Այսպես, 2017թ. ընթացքում երկու ավիաընկերություններ, որոնք ունեցել են 10-ից ավելի օդանավեր (բազավորման վայրը աֆրիկյան երկրներ), համախառն եկամուտ են ցույց տվել, համապատասխանաբար, մեկ օդանավի մասով, տարեկան միջինը՝ 1,727.6 հազ. դրամ և 4,733.3 հազ. դրամ:
- Բլանկների շարժի հաշվառման և ձևակերպման գործընթացի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընդամենը 369 արժեթուղթ բացակայում է: Ստացված բլանկների շրջանառության նկատմամբ պատշաճ հսկողություն չի իրականացվել ՔԱԳՎ-ի ղեկավարության կողմից, որն ուշադրությունից դուրս է թողել այդ հարցերը՝ բավարար կերպով չկանոնակարգելով պետական նշանակության բլանկների շրջանառությանը ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված գործառույթները, առկա են չվերադարձվող բլանկներով գործունեություն իրականացնելու ռիսկեր:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ առողջապահության նախարարության «առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (այսուհետ՝ ԾԻԳ)

Հաշվեքննության կատարման ժամկետը

06.07.18-29.03.19թթ.

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

01.01.17-30.09.18թթ.

Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Վարկային և դրամաշնորհային ծրագրեր		Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն, կիրառվել են գննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
0	2	5	
Հաշվեքննության կարծիք			
Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք: Չի պահպանվել կատարողականի հաշվեքննության տնտեսման սկզբունքը:			

Առավել ուշագրավ փաստեր

- ԾԻԳ-ի կողմից ձեռք բերված սարքավորումների և պարագաների գները համեմատվել են դրանք ԾԻԳ-ին մատակարարած կազմակերպությունների կողմից ներմուծման և ձեռքբերման գների հետ: 2.18 մլրդ դրամ արժեքով 167 անվանում ապրանքների համեմատությամբ պարզվել է, որ մատակարարները դրանք ձեռք են բերել 1.3 մլրդ դրամով կամ ԾԻԳ-ին տրամադրել են 847.2 մլն դրամ ավելի արժեքով (առանց տեղափոխման, տեղադրման և ուսուցման ծախսերի):

Մասնավորապես, «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 10.11.2017թ.-ին մատակարարվել է «Լապարոսկոպիկ հավաքածու»՝ 102.5 մլն դրամ արժեքով: Վերջինս այդ հավաքածուն 30.10.2017թ.-ին ձեռք է բերել 41.0 մլն դրամով մեկ այլ մատակարարից և մոնիտորը ՀՀ է ներմուծվել 3.3 մլն դրամով: Նշված հավաքածուն (առանց մոնիտորի) ձեռք էր բերել նույն օրը՝ 38.97 մլն դրամով, վերջինս էլ նշված հավաքածուն ՀՀ է ներմուծել 28.03.2017թ.-ին, որի մաքսային արժեքը կազմել է 23.2 մլն դրամ: Հատկանշական է, որ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից ԾԻԳ-ին 02.03.2018թ.-ին մատակարարվել է համանման «Լապարոսկոպիկ հավաքածու»՝ 37.5 մլն դրամով:

- Հաշվեքննության ընթացքում համեմատվել են բժշկական հաստատությունների համար սարքավորումների, կահույքի և պարագաների միևնույն լոտերի համար հայտ ներկայացրած կազմակերպությունների գնային առաջարկների առանձին չափաբաժինների միավորի գները և տեխնիկական բնութագրերը: Արդյունքում պարզվել է, որ եթե մրցույթների գնահատումը կատարվեր ըստ առանձին չափաբաժինների և ոչ թե լոտերի, ապա՝ երեք մրցույթներով կարող էր տնտեսվել 184.4 մլն դրամ:

ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		Ստուգման օբյեկտները
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտե		«Ջրառ» ՓԲԸ
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
06.07.18-29.03.19թթ.		01.01.17-30.09.18թթ.
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ջրային կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեությունը		Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
3	9	10
Հաշվեքննության կարծիք		
Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:		

Առավել ուշագրավ փաստեր

- Բացակայում է ջրի ծավալների իրական հաշվառումը: 2013 թվականին 500.0 հազ. եվրո արժեքով ձեռք բերված չափիչ սարքերը սահմանված վայրերում անհասկանալի պատճառներով տեղադրված չեն:
- «Ջրառ» ՓԲԸ-ին պատկանող գույքը հանձնվել է վարձակալության՝ չպահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, իսկ վարձավճարները սահմանվել են կամայականորեն:

Մասնավորապես.

- «Գրին Էներջի կոնցեռն» ՍՊԸ-ին Վերնաշենի պոմպակայանը վարձակալությամբ է տրամադրվել ամսական 220.0 հազ. դրամով: Վերջինս այդ պոմպակայանը գրավադրել է՝ ստանալով համապատասխան վարկային գիծ:

- «Յագուար կենդանիների աշխարհ» ՍՊԸ-ին Հեր-Հեր ջրամբարի տարածքը վարձակալությամբ տրամադրվել է ամսական 20.0 հազ դրամով՝ ձկնաբուծության նպատակով:
- Հեր-Հեր ջրամբարից 2 ՀԷԿ-երի համար էներգետիկ նպատակով 2017թ.-ին և 2018թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ բաց է թողնվել 40.5 մլն խմ ջուր, որի դիմաց «Ջրառ» ՓԲԸ-ն ստացել է ընդամենը 3 մլն դրամ (մատակարարված ջրի ինքնարժեքը կազմել է շուրջ 93 մլն դրամ):
- Ռիսկային են գարնան նախապատրաստական աշխատանքների մասով 2017թ.-ին և 2018թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ կատարված ծախսերը՝ շուրջ 460 մլն դրամի չափով, որից 233 մլն դրամը՝ կանխիկ: Այդ աշխատանքների իրականացումը փաստաթղթերով հիմնավորված չէ: Գնումների գործընթաց չի իրականացվում: Աշխատանքների արժեքներն էականորեն բարձր են: Օրինակ՝ հաստիքային աշխատողին վճարվում է ամսական 80.0 հազ. դրամ, իսկ նմանատիպ աշխատանք կատարողի հետ կնքվում է պայմանագիր՝ 27 օրվա համար՝ 917.0 հազ. դրամ, կամ «ԶԻԼ» մակնիշի մեքենաների շուկայական արժեքը կազմում է մոտ 2.5 մլն դրամ, մինչդեռ դրանք վարձակալվում են (30-42 օրվա համար) միջինը 1.2 մլն դրամով, «Կամազ» մակնիշի մեքենաները՝ 1.5 մլն դրամով: ԶՕԸ-ների կողմից նմանատիպ ռիսկային կերպով ծախսվել է 1.7 մլրդ դրամ:
- Համապատասխան ջրանցքով ինքնահոս եղանակով Սևանից ստացված ջուրն ուղղվել է (իջեցվել է) պոմպակայանների համապատասխան ավազաններ և այնտեղից հետ է մղվել նույն ջրանցքը: Նման կերպ ծախսվել է հավելյալ 1.1 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա:
- Համադրելով որոշ պոմպերի ծախսած էլեկտրաէներգիայի ծավալը դրանց տեխնիկական ցուցանիշների (արտադրողականության) հետ, պարզվել է, որ «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից 2017թ.-ին և 2018թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ պակաս է հաշվարկվել 6,528.86 և 6,798.74 հազ. խմ մեխանիկական եղանակով ստացված ջուր, համապատասխանաբար՝ 76.2 մլն դրամ և 78.3 մլն դրամ արժեքով:
- ԶՕԸ-ների կողմից չեն պահպանվել «Ջրառ» ՓԲԸ-ին ներկայացված ոռոգման ջրի տրամադրման պլան-ժամանակացույցները, ինչն ազդեցություն է ունենում Սևանա լճից բաց թողնվող ջրի, Մխչյանի և Ռանչպարի դոտացիոն պոմպային կայաններով մղվող ջրի ծավալների և, հետևաբար, ծախսված էլեկտրաէներգիայի ծավալների վրա:
- Շարունակվել է ԶՕԸ-ների կողմից ջրի դիմաց կանխիկ գանձման գործառույթի իրականացումը:
- Մշակված չէ ջրի կառավարման-պլանավորման արդյունավետ համակարգ: Պլանավորումը պետք է իրականացնել՝ սկսած գյուղացիների ջրապահանջարկից, մինչև՝ Սևանա լճից ջրի բացթողումը: ԶՕԸ-ների տեղեկատվական միասնական էլեկտրոնային համակարգի հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում, ինչի արդ-

յունքում ջրի կառավարման գործընթացի համար սահմանված արդյունավետությունը չի պահպանվել:

- Արփա-Սևան թիվ 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի և նորմաների անհամապատասխանություններով, որի արդյունքում նախահաշվային արժեքը բարձր է հաշվարկվել 1,6 մլրդ դրամի չափով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության ծառայություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
06.07.18-28.12.18թթ.	01.01.17-31.12.17թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
4	11	18
Հաշվեքննության կարծիք		
Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք		

Հաշվեքննությունն իրականացվել է ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի դրույթներին համապատասխան: Հաշվեքննվել է Սոցիալական ապահովության ծառայության 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը:

Սոցիալական ապահովության ծառայության տեղեկատվական շտեմարաններում, սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում, բնակչության պետական ռեգիստրում և այլ շտեմարաններում առկա տվյալների

համադրման արդյունքում պարզվել է, որ կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացում առկա են էական խեղաթյուրման ռիսկեր:

Առավել ուշագրավ փաստեր

Աշխատանքային կենսաթոշակ (գումարը՝ 220.7 մլրդ դրամ)

- Երկրից 12 ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակ ստացող շահառուներին անկանխիկ եղանակով փաստացի վճարվել է 702.6 մլն դրամ, կանխիկ եղանակով՝ 619.1 մլն դրամ: Երկրից բացակայող և այլ անձին լիազորագրով այդ իրավասությունը չտված անձին կենսաթոշակի տրամադրումը ռիսկային է:
- ՀՀ-ից 3-ից 9-ը ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակ ստացող շահառուներին անկանխիկ եղանակով փաստացի վճարվել է 9 մլրդ դրամ, իսկ կանխիկ եղանակով՝ 4 մլրդ դրամ: Ծառայությունը, հաշվի առնելով քաղաքացիների՝ երկրից բացակայելու հանգամանքը, բավարար հսկողություն չի իրականացրել պարզելու համար, արդյո՞ք տվյալ անձինք պահանջվող ժամանակաշրջանում իրականում ներկայացել և ստացել են կենսաթոշակ:
- Քրեակատարողական հիմնարկներում կամ հոգեբուժարաններում գտնվող շահառուների կենսաթոշակը (602.8 մլն դրամ և 48.2 մլն դրամ) վճարվել է նաև այդ կազմակերպությունների ղեկավարների վավերացված լիազորագրերի հիման վրա: Բացակայում են երաշխիքներ, որ կենսաթոշակառու իրականում ստանում է իր կենսաթոշակը:
- «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Հայփոստ) միջոցով վճարվել է 178.8 մլրդ դրամի չափով (60%) կենսաթոշակ, իսկ բանկերի միջոցով՝ 119.8 մլրդ դրամի չափով (40%): Այդ ծառայությունների դիմաց պետությունը Հայփոստին վճարել է 1.5 մլրդ դրամ, իսկ բանկերին՝ 80 մլն դրամ միջնորդավճար: Հայփոստի միջնորդավճարի մեծության չափը չի հիմնավորվում:
- Հաշմանդամության համար նախատեսված չափորոշիչների խստացման և կրկնակի կենսաթոշակ վճարելու դեպքերի բացառման նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտով նախատեսվել է 20,575-ով կրճատել աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց թիվը: Արդյունքում պետք է առաջանար շուրջ 9 մլրդ դրամի խնայողություն: Հաշվեքննությամբ պարզվել է, որ ցուցակները չեն վերանայվել:

Ընտանեկան նպաստ (գումարը՝ 36.8 մլրդ դրամ)

Տարբեր տեղեկատվական շտեմարանների համադրման արդյունքների, բնակության վայրի փոփոխությունների, մի շարք ծածկագրերի սխալ կիրառման և անվավեր ճանաչված գործերի հիման վրա ընտանեկան նպաստի համակարգի ծրագրի (36.8 մլրդ դրամ) հաշվեքննությամբ արձանագրվել են հնարավոր էական ռիսկեր՝ 10,193 դեպքով, 2.3 մլրդ դրամի չափով: Այդ թվում՝

- Նպաստառու ընտանիքների հասցեններում բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման 0-ական կամ չնչին ծավալներով սպառմամբ պայմանավորված դիսկեր՝ 3,891 դեպք, 824.5 մլն դրամ.
- Ամուսնալուծված ընտանիքի երեխա և միայնակ մոր երեխա ծածկագրերի սխալ կիրառման հնարավոր դիսկեր՝ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տեղեկատվական շտեմարանների համադրման հիման վրա 2,184 դեպք, 741.1 մլն դրամ.
- Հարակից շտեմարանների (անշարժ գույքի առքուվաճառքների, նվիրատվությունների, տրանսպորտային միջոցների առկայության և ձեռքբերումների, մաքսային մուծումների դեպքերում) համադրման արդյունքների կիրառման կամայական և սուբյեկտիվ մոտեցումների դիսկեր՝ 2,406 դեպք, 419.2 մլն դրամ.
- Միայնակ կենսաթոշակառու ծածկագրի սխալ կիրառման դիսկեր՝ 269 դեպք, 55.2 մլն դրամ.
- Անշարժ գույքի ձեռքբերումների և նվիրատվության, տրանսպորտային միջոցների ձեռքբերումների և առկայության, մաքսային մուծումների վերաբերյալ տվյալներ ունեցող թվով 1,443 անվավեր ճանաչված նպաստի գործերը օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցումների փոխարեն անվավեր ճանաչվելու դիսկեր, որի արդյունքում նշված նպաստառու ընտանիքներին, ընդհանուր առմամբ, 215.5 մլն դրամի չափով վճարված գումարների ետգանձումներ չեն կատարվել:

Թաղման նպաստ (գումարը՝ 4. 9 մլրդ դրամ)

Արձանագրվել են 90 մլն դրամ գումարի չափով թաղման նպաստների վճարման դիսկային դեպքեր: Այդ թվում՝

- Հուղարկավորությունը կատարվել է «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից, սակայն տրամադրվել է նաև թաղման նպաստ՝ թվով 5 դեպք՝ 1.0 մլն դրամ գումարի չափով: Նշված 5 դեպքում թաղման նպաստը ստացել է մեկ անձ:
- Առկա են մեկ անձի կողմից թաղման նպաստ ստանալու բազմաթիվ դեպքեր՝ 89.6 մլն դրամի չափով 60 անձ ստացել է թվով 448 թաղման նպաստ, ընդ որում՝ 4 անձ ստացել է 267 թաղման նպաստ՝ 53.4 մլն դրամ ընդհանուր գումարով, որից՝
 - 1 անձ՝ 169 նպաստ՝ 33.8 մլն դրամ գումարով,
 - 1 անձ՝ 45 նպաստ՝ 9 մլն դրամ գումարով,
 - 1 անձ՝ 35 նպաստ՝ 7 մլն դրամ գումարով,
 - 1 անձ՝ 18 նպաստ՝ 3.6 մլն դրամ գումարով:

Հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի լիազորությունների սահմանափակ շրջանակը՝ խեղաթյուրումների վերաբերյալ դիսկերի վերջնական և ամբողջական գնահատման և բացահայտման նպատակով հաշվեքննության արդյունքներն

ուղարկվել են ՀՀ կառավարություն, ինչպես նաև քննարկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ, ում առաջարկվել է ստեղծել հատուկ աշխատանքային խումբ, որը կստուգի արձանագրված ռիսկերը և դրանց վերաբերյալ կտա համապատասխան տեղեկատվություն:

Հաշվեքննիչ պալատի 2019թ. գործունեության ծրագրի համաձայն՝ ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի դրույթներից ելնելով, Սոցիալական ապահովության ծառայությունում նոր հաշվեքննություն է իրականացվում՝ այս անգամ ընդգրկելով 2018 թվականի գործունեությունը:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնք		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
02.07.18-04.10.18թթ.	01.01.16-29.06.18թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Համայնքային բյուջեի միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և համայնքային սեփականության կառավարում	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
0	1	13

Նորակերտ համայնքի բնակչության թիվը կազմում է շուրջ 3,000 մարդ, մակերեսը՝ շուրջ 1,800 հա, միջին տարեկան բյուջետային ծախսերը՝ 85 մլն դրամ, իսկ եկամուտները՝ 68 մլն դրամ:

Հաշվեքննության արդյունքներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Առավել ուշագրավ փաստեր

- 2016թ. համայնքի մշակույթի տան, դրա բեմական մասի և գյուղապետարանի վերանորոգման համար հատկացված 26,957.1 հազ. դրամ գումարի ծախսման

¹ Տվյալ հաշվեքննության մասով կարծիք չի ներկայացվել, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով կարծիք նախատեսող պահանջը սահմանող դրույթն ուժի մեջ է մտել հաշվեքննության ավարտից հետո՝ 2018 թվականի հոկտեմբերի 27-ին:

հաշվեքննության արդյունքում հայտնաբերվել են 6,762.1 հազ. դրամի անհամապատասխանություններ:

- Մի շարք կազմակերպությունների և ֆիզիկական անձանց պատկանող շենք-շինություններ դուրս են մնացել համայնքի հողի հարկի և գույքահարկի բազայից, որի արդյունքում համայնքի բյուջե չի վճարվել 6,709.3 հազ. դրամ գումար:
- 11,777.2 հազ. դրամի ծախսերը հիմնավորված չեն, առանց պայմանագրի փոփոխության կատարվել են ավելի վճարումներ:
- Համայնքին պատկանող նյութերի դուրս գրումը հիմնավորող փաստաթղթերը բացակայել են, իսկ աշխատանքները հաճախ կատարվել են լիցենզավորում չունեցող կազմակերպությունների կողմից:
- Համայնքի մանկապարտեզը փաստացի չի գործել, աշխատողները գտնվել են հարկադիր պարապուրդում, սակայն տնօրենին և գլխավոր հաշվապահին դրույքաչափի 100%-ի չափով աշխատավարձ է վճարվել, որի արդյունքում կատարվել է 1,389.8 հազ. դրամի չափով ավելի ծախս:
- 2016թ. սեպտեմբերին ձեռք է բերվել Toyota Land Cruiser Prado մակնիշի ավտոմեքենա 9,418 հազ. դրամով, որը 2018թ. հունվարին աճուրդով վաճառվել է 5,050 հազ. դրամով: Աճուրդի հայտարարությունում նշվել է, որ այն անսարք վիճակում է, մինչդեռ գնահատողի եզրակացության համաձայն այն գտնվել է սարքին վիճակում: Աճուրդն իրականացվել է ոչ թափանցիկ կերպով:
- Աղբահանության վճարների գծով համայնքային բյուջե չի հավաքագրվել 3,997.8 հազ. դրամ:
- Տեղական տուրք վճարող տնտեսվարող սուբյեկտների կողմից համայնքային բյուջե պակաս է վճարվել 594.2 հազ. դրամ:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը	Ստուգման օբյեկտները
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	«Բարձրավոլտ էլեկտրազանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ ԲԷՑ)
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
06.07.18-29.03.19թթ.	01.01.17-30.09.18թթ.
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
Պետական բյուջեից հատկացված	Իրականացվել է ֆինանսական և

միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում			համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են գննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:					
Համակարգին միտված առաջարկություններ		5	Արդյունքին միտված առաջարկություններ		14	Խնդիրներին միտված առաջարկություններ		31
Հաշվեքննության կարծիք								
Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:								

Առավել ուշագրավ փաստեր

1. ԲԷՑ-ի ներքին գնումներ

1) «ՄոնիտորանսսսՀին» ՓԲԸ-ն ԲԷՑ-ի ճաշարանի և վարչական մասի վերակառուցման համար հայտարարված մրցույթում 353.9 մլն դրամ պայմանագրային արժեքով հաղթող է ճանաչվել, իսկ նվազագույն գին առաջարկած՝ 119 մլն դրամով պակաս մասնակցի հայտը մերժվել է՝ հայտում պահանջված լիցենզիայի բացակայության հիմնավորմամբ, մինչդեռ տվյալ լիցենզիայի վերաբերյալ տվյալները հասանելի և առկա են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կայքում: Մրցութային փաթեթի և պայմանագրի կատարման գործընթացի փաստաթղթերի գննմամբ պարզվել է՝

ա) «ՄոնիտորանսսսՀին» ՓԲԸ-ն ներկայացել է նույնանման անվանմամբ այլ ընկերության լիցենզիաներ և մասնագիտական փորձառության փաստաթղթեր, ինչին մրցութային հանձնաժողովը չի արձագանքել:

բ) Ընկերության հայտը չի ապահովել որակավորման ֆինանսական չափանիշը:

գ) Պայմանագիրը կնքվել է՝ առանց պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի:

դ) Առանց որևէ իրավական երաշխիքի տրվել է կանխավճար 100 մլն դրամի չափով ապրանքներ ներմուծելու հիմնավորմամբ, ինչը սակայն իրականում չի ներմուծվել:

ե) Պայմանագիրը կնքվել է 23.09.2017թ.-ին և պետք է ավարտվեր այն կնքելուց հետո 60 օրվա ընթացքում: Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետն առանց հիմնավորումների երկարաձգվել է մինչև 01.06.2019թ., որով ընկերությունը խուսափել է ԲԷՑ-ի կողմից տույժերի կիրառման պայմանագրային իրավունքից, որը տվյալ դեպքում կկազմեր մոտ 177 մլն դրամ գումար: Ներկայումս աշխատանքներն ամփոփման փուլում են: Հաշվեքննության ընթացքում կատարված աշխատանքի որակը և ծավալը չեն գնահատվել, քանի որ այդ հարցերը դուրս են հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանից:

2) «Բիգ Էներգո» ՍՊԸ-ն 220կՎ և 110կՎ հզորությամբ լարման ցանցերում աշխատանքների կատարման փորձ չի ունեցել, սակայն ԲԷՑ-ը, օրենսդրության պահանջներին ոչ համապատասխան, ընկերությանը շնորհել է Անուշ-Բջնի, Շահումյան-2, Էջմիածին գծերի վթարի վերացման, 110կՎ Գորիս օղային գծի (այսուհետ՝ ՕԳ) խարսխային հատվածի տեղափոխման, Մարաշ, Սևան և Կենտրոն օղային գծերի հենարանների հողանցման կոնտուրների կառուցման աշխատանքների կատարման պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 224 մլն դրամ: Միաժամանակ, «Բիգ Էներգո» ՍՊԸ-ն պայմանագրի կնքումից անմիջապես հետո, առանց պայմանագրով նախատեսվող հիմքերի, ամբողջ ծավալով 173 մլն դրամի չափով կնքել է ենթակապալի պայմանագրեր: Տարբերությունը կազմում է 51 մլն դրամ:

3) «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին 27.11.2017թ.-ին շնորհվել է Գյումրի 220կՎ լարման ՕԳ-ի թվով 245 հենարանների ներկման պայմանագիրը՝ 142.2 մլն դրամ գումարով, մինչդեռ ընկերությունը չի համապատասխանել մրցույթի որակավորման չափանիշներին: Առանց բանկային երաշխիքի և պայմանագրով նման պայման նախատեսված լինելու՝ ընկերությանը տրվել է 71.1 մլն դրամ կանխավճար, իսկ, որպես հիմնավորում, ներկայացվել է անհրաժեշտ նյութեր ներկրելու հանգամանքը, մինչդեռ ստուգման արդյունքում պարզվել է, որ տվյալ կազմակերպությունը նման նյութերի ներմուծում ընդհանրապես չի իրականացրել:

4) «Առսարքտեխ» ՍՊԸ-ին շնորհվել է Շամբ 220կՎ լարման ՕԳ 268 հենարանների ներկման 187.3 մլն դրամ գումարով պայմանագիր, որը ինչպես վերը բերված օրինակում, չի ունեցել պահանջվող մասնագիտական փորձառություն, և վերջինիս նույն հիմնավորմամբ տրվել է 89 մլն դրամ կանխավճար: Այս դեպքում աշխատանքներն՝ առանց պայմանագրով նախատեսվող հիմքերի, տրվել է ենթակապալառու «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ -ին:

5) «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ին 29.05.2017թ.-ին շնորհվել է Սիփան 220կՎ լարման ՕԳ թվով 87 հենարանների ներկման 66.5 մլն դրամ գումարով պայմանագիր, մինչդեռ ընկերությունը նմանատիպ որևէ աշխատանք կատարելու փորձ չի ունեցել: Մրցութային փաթեթում առկա են փաստերի խեղաթյուրումներ: Արձանագրվել են պայմանագրային և փաստացի ցուցանիշների անհամապատասխանություններ, ներկվել են պայմանագրով չնախատեսված հենարաններ, իսկ որպես հիմնավորում, կատարողը ներկայացրել է պատվիրատուի կողմից տրված բանավոր ցուցումը:

Հարկանշական է, որ 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված ներկման աշխատանքների մրցույթի պայմաններով սահմանվել է, որ վերջնական աշխատանքների կատարումը պետք է ավարտվի գծի անջատումից 335 օր հետո: Փաստորեն, ստացվում է, որ ներկման աշխատանքները կարելի է իրականացնել մի քանի փարիների ընթացքում: Հետևաբար, աշխատանքների կատարման ուշացման համար պատասխանավորության միջոցների կիրառումը իրագործելի չի եղել, այնինչ, տրված կանխավճարները տնօրինվում են առանց ժամկետների սահմանափակման:

Հինգ ամսվա ընթացքում կատարվել է աշխատանքների մոտ 50%-ը, իսկ այդ ընթացքում ԲԷՑ-ը «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին

գծի անջատման համար դիմել է երկու անգամ, որը և ապահովվել է, այսինքն՝ անջատումների մասով խոչընդոտներ գործնականում չեն եղել:

6) «Վոլիոս» ՓԲԸ-ի և ԲԷՑ-ի միջև կնքվել է 141 մլն դրամ գումարով պայմանագիր: Ընկերության կողմից ներկայացված հայտը չի համապատասխանել մասնագիտական և ֆինանսական որակավորման չափանիշներին, հայտով ներկայացված որակավորումներ ունեցող աշխատողները իրականում չեն հանդիսացել «Վոլիոս» ՓԲԸ-ի աշխատողներ: Օրենսդրության պահանջներին ոչ համապատասխան՝ տրվել է 40% կանխավճար:

«Վոլիոս» ՓԲԸ-ն աշխատանքները հիմնականում իրականացրել է ԲԷՑ-ի միջոցների հաշվին: Մասնավորապես, ԲԷՑ-ի 7 աշխատակիցներ ազատվել են աշխատանքից և ընդունվել «Վոլիոս» ՓԲԸ-ում աշխատանքի, իսկ ԲԷՑ-ի շուրջ 13 մլն դրամ արժողությամբ գեոդեզիական չափագրման սարքավորումները փաստացի օգտագործվել են «Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից:

7) «Էներգոցանց Մոնտաժ» ՍՊԸ-ին շնորհվել է 14.2 մլն դրամ գումարով «Լոռի 1» հողմաէլեկտրակայանի թերությունների վերացման աշխատանքների պայմանագիր: Ընկերությունը չի ունեցել նմանատիպ աշխատանքների կատարման պահանջված փորձառություն և, ըստ էության, չի կարողացել նորոգել դրանք, սակայն վերջինիս պայմանագրով սահմանված գումարը վճարվել է: Հողմաագրեգատները մինչ օրս չեն աշխատում, որի արդյունքում ԲԷՑ-ը կորցրել է մոտ 153 մլն դրամ գումարի արտադրանք տալու հնարավորությունը:

II. ՀՀ պետական վերահսկողության ծառայության (այսուհետ՝ ՊՎԾ) ուսումնասիրության արդյունքում կատարված վերականգնումների մասին

ԲԷՑ-ում ՊՎԾ կողմից ուսումնասիրության արդյունքում մի շարք մատակարարների կողմից, որպես վնասի փոխհատուցում, փոխանցվել են գումարներ ԲԷՑ-ի բանկային հաշվին:

Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ փոխանցումները՝ 172.5 մլն ՀՀ դրամ (այդ թվում՝ «Բիգ Էներգո» ՍՊԸ՝ 98 մլն դրամ, «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ՝ 30 մլն դրամ, «Էներգացանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ՝ 25 մլն դրամ, «Առսարքտեխ» ՍՊԸ՝ 7 մլն դրամ, «Հիդրոէլեկտրոմոնտաժ» ՓԲԸ՝ 7.5 մլն դրամ, «Ախուրյանի կոոպչին» ՍՊԸ՝ 5 մլն դրամ) հաշվապահորեն ձևակերպվել են որպես «ստացված կանխավճարներ», այսինքն՝ ԲԷՑ-ի մոտ առաջանում է կրեդիտորական պարտք, իսկ մատակարարների մոտ՝ դեբիտորական:

ԲԷՑ-ի պարզաբանմամբ նման ձևակերպման պատճառ էր հանդիսացել այն հանգամանքը, որ ՊՎԾ ուսումնասիրությունների արդյունքներով կազմված փաստաթուղթը դեռ հաստատված չէր եղել, ուստի իրավական հիմքի բացակայության պատճառով վճարումները ձևակերպվել էին որպես՝ կանխավճար՝ առաջացնելով ԲԷՑ-ի մոտ կրեդիտորական պարտք:

III. «Նաիրիտ-2» ՓԲԸ

22.02.2018թ. հիմնադրվել է «Ա-Ս ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» ՍՊԸ-ն:

Գրանցումից մեկ օր անց՝ 23.02.2018թ-ին, «Ա-Ս ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ վարչապետին և ցանկություն հայտնել 627 մլն դրամով ձեռք բերել «Նաիրիտ-2» ՓԲԸ-ին պատկանող Երևանի Արտաշատի խճուղի 5/1 հասցեում գտնվող 29.9 հազ. քմ շենք-շինությունը և զբաղեցված 10.5813 հա մակերեսով հողատարածքը՝ պարտավորվելով կատարել 7.5 մլրդ դրամի ներդրում և ստեղծել 250 նոր աշխատատեղ:

01.03.2018թ. Կառավարության որոշմամբ՝ «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի գույքը 627 մլն դրամ լիկվիդային արժեքով օտարվել է «Ա-Ս ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» ՍՊԸ-ին:

Պետական գույքի կառավարման վարչությունը պաշտոնապես առաջարկել էր Կառավարությանը տվյալ որոշմամբ հստակ սահմանել ներդրումների կատարման վերահսկման մեխանիզմների վերաբերյալ դրույթ, մինչդեռ Կառավարությունը ներդրումների մասն ընդունել է՝ «ի գիտություն»: Արդյունքում, ներդրումների և աշխատեղերի մասով ոչինչ չի ներառվել կնքված պայմանագրում:

IV. Ենթակայանների վերակառուցման, օդային գծերի փոխարինման և մեքենա-մեխանիզմների մատակարարման վարկային և դրամաշնորհային ծրագրեր

Ծրագրերի վերաբերյալ ֆինանսական և այլ բնույթի համառոտ տեղեկատվությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Ծրագիր	Գլխավոր կապալառու	Գումարը	Կնքման ամսաթիվը	Ավարտը
«Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցում	ԼԵԵԵԿ (Չինաստան)	14.8 մլն դոլար	06.05.2016	26.10.2018
«Հաղթանակ» ենթակայանի վերակառուցում	Կասկադ Էներգո (ՌԴ)	14 մլն դոլար	01.07.2016	31.12.2018
Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցում	Էֆասեկ (Պորտուգալիա)	6.1 մլն դոլար	01.07.2016	13.07.2018
«Վանաձոր» ենթակայանի վերակառուցում	Քսիան (Չինաստան)	5.1 մլն դոլար	01.07.2016	31.12.2018
«Աշնակ» ենթակայանի վերակառուցում	Քսիան (Չինաստան)	9.1 մլն դոլար	01.07.2016	31.03.2019
Հրազդան ԶԷԿ-ից Շինուհայր օդային գծերի փոխարինում	Կալպատարու (Հնդկաստան)	25.7 մլն դոլար	21.11.2012	30.11.2016

Լավար – Նոյեմբերյան օդային գծերի փոխարինում	Գամ Արակ (Իրան)	4.4 մլն դոլար	11.08.2016	22.10.2020
Մեքենամեխանիզմների մատակարարում	Կալուգազլավսնաբ (ՌԴ)	1.4 մլն եվրո	15.11.2017	29.03.2018

- Էներգետիկ ոլորտի վարկային և դրամաշնորհային ծրագրերի մասով ԲԷՑ-ի և արտասահմանյան ընկերությունների (կապալառուների) միջև հաճախ առաջացել են անհամաձայնություններ և միմյանց նկատմամբ փոխադարձ պահանջներ: Միլիոնավոր դոլարներ արժեցող պայմանագրերի պահանջները հաճախ անտեսվել են:

Օրինակ՝ «Չարենցավան» ենթակայանի վերակառուցման մասով պայմանագրի կատարումը ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի գրությամբ՝ «*Էներգահամակարգի պահանջների փոփոխության*» պատճառաբանությամբ, 24.10.2017թ.-ից կասեցվել է, մինչդեռ ԲԷՑ-ը աշխատանքների հետագա ընթացքի մասով Համաշխարհային բանկին չի դիմել, հարցը նախարարության վարկերի կառավարման խորհրդում չի քննարկվել: Պայմանագրի կասեցման դրությամբ կապալառուին (*Էֆասեկ պորտուգալական ընկերություն*) 2016 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին արդեն վճարվել էր 1.2 մլն դոլար՝ որպես կանխավճար, մինչդեռ 30.09.2018թ. դրությամբ որևէ կատարողական առկա չէր: Պայմանագրի ժամկետն ավարտվել է 13.07.2018թ.-ին, այն չի երկարաձգվել:

- Տարբեր վարկային ծրագրերի շրջանակներում 6 ենթակայանների վերակառուցումը նախատեսված էր ավարտել 2018թ. ընթացքում, սակայն 30.09.2018թ. դրությամբ դրանց աշխատանքների կատարողականները տատանվում են 21-44% միջակայքում:

Օրինակ՝ «Շինուհայր» ենթակայանի վերակառուցման աշխատանքների կատարողականը՝ 20.9% է, մինչդեռ պայմանագիրն ավարտվել է 26.10.2018թ.-ին:

- ԲԷՑ-ի կողմից ընդունվել են ապրանքներ և աշխատանքներ, որոնք չեն բավարարում պայմանագրային պահանջներին, իսկ դրանց դիմաց կատարվել են վճարումներ:

Օրինակ՝ Հրազդան ԶԷԿ-ից «Շինուհայր» ենթակայան օդային գծերի փոխարինման մասով ապամոնտաժման աշխատանքներն ընդունվել են ամբողջությամբ և դրանց դիմաց կատարվել են 122.8 հազ. դոլարի և 39.8 մլն դրամի վճարումներ, մինչդեռ ապամոնտաժված հաղորդալարերի, ամպրոպապաշտպան ճոպանների ծավալները հիմնավորող փաստաթղթերը խեղաթյուրված են, 13 հենարանների մնացորդները թափված են դաշտերում, ապամոնտաժման հաշվապահական ձևակերպում չի իրականացվել:

Մեկ այլ օրինակ՝ Մեքենամեխանիզմների մատակարարման մասով Կալուգազլավսնաբ (ՌԴ) ընկերությունը պայմանագրով սահմանված 170 հազ. եվրո արժեքով LVT-3A մակնիշի երկու ավտոլաբորատորիայի փոխարեն նույն արժեքով մատակարարել է LVT-1 մակնիշի երկու ավտոլաբորատորիա, ինչը տեխնիկապես զիջում է պայմանագրով սահմանված մակնիշի ավտոլաբորատորիային:

Եվս մեկ օրինակ՝ «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման պայմանագրի շրջակնակներում մոտ 1 մլն դոլար արժեքով երկու գծային կարգավորվող տրանսֆորմատորները մատակարարվել են պայմանագրի մատակարարման պայմաններին ոչ համապատասխան, ինչպես նաև տվյալ տրանսֆորմատորների գործարանային փորձարկումները չեն իրականացվել պայմանագրի տեխնիկական պահանջներով, որի արդյունքում մատակարարված սարքավորումները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական պահանջներին:

- Հատկանշական է, որ պայմանագրերի կատարման ուշացման տույժի պահանջներ ԲԷՑ-ի կողմից չեն կիրառվել:

Օրինակ՝ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների մասով ուշացման մոտ 1.5 մլն դոլարի տույժի պահանջ ԲԷՑ-ի կողմից կապալառուին չի ներկայացվել:

Մեկ այլ օրինակ՝ Հրազդան ԶԷԿ-ից «Շինուհայր» ենթակայան գնացող օդային գծերի փոխարինման մասով մոտ 2.5 մլն դոլարի ուշացումների համար հաշվարկվող տույժի պահանջ ԲԷՑ-ի կողմից Կալպատարու (Հնդկաստան) ընկերությանը չի առաջադրվել (պայմանագրի ավարտը՝ 30.11.2016թ.):

Մեկ այլ օրինակ՝ մեքենամեխանիզմների մատակարարման մասով պայմանագիրն իրականացվել է ուշացումներով: Պայմանագրի անգլերեն տարբերակի 7.4 ենթակետի համաձայն՝ ուշացման վնասի հատուցման պահանջի հաշվարկը կատարվում է մատակարարումների ծավալի նկատմամբ, որը կազմում է պայմանագրի գնի 10%-ը կամ՝ 143 հազ. եվրո: Իսկ պայմանագրի ռուսերեն տարբերակում նույն ենթակետը շարադրված է այլ կերպ՝ վնասի հատուցման պահանջի հաշվարկը կատարվում է մատակարարման ծավալի նկատմամբ, այս դեպքում տույժը կազմում է 30 հազ. եվրո: Պայմանագրի հատուկ պայմանների 1.4 ենթակետի համաձայն՝ տարբեր բովանդակության կամ մեկնաբանության դեպքում գերակայող է անգլերեն տարբերակը: Ուշացման տույժի վճարման որևէ պահանջ ո՛չ 30 հազ. եվրոյի, ո՛չ էլ՝ 143 հազ. եվրոյի մասով, ԲԷՑ-ի կողմից կապալառու Կալուգազլափսնաթ (ՌԴ) ընկերությանը չի ներկայացվել:

Հաշվեքննության ընթացքում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող կասկածների հիմքով Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մարտի 18-ի որոշումներով օրենքի սահմանած կարգով վարկային ծրագրերի մասով հետևյալ երկու առանձին ուղղություններով նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

«Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման մասով

«Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման համար 06.05.2016թ. ԲԷՑ-ի և չինական ԼԵԵԵԿ ընկերության (այսուհետև՝ Կապալառու) միջև կնքվել է 14.8 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր, իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 26.10.2018թ.: Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 9.8 մլն ԱՄՆ դոլար:

Շինարարական և մոնտաժային աշխատանքների գծով ենթակապալառուների որակավորման նվազագույն չափանիշների համապատասխանության ստուգմամբ

պարզվել է, որ հետևյալ ենթակապալառուները չեն բավարարել ենթակապալառուների համար սահմանված որակավորման նվազագույն չափանիշներին.

ա) «Էներգանորոգում» ԲԲԸ, երկու ենթակայանների շինարարական և մոնտաժային աշխատանքներ,

բ) «Արտաշատ Ջրշին» ՍՊԸ և «Բիգ Էներգո» ՍՊԸ ՀԶ, Շինուիայր ենթակայանի շինարարական և մոնտաժային աշխատանքներ,

գ) «Էներջի գրուպ» ՍՊԸ, Շինուիայր ենթակայանի շինարարական և մոնտաժային աշխատանքներ:

Բացի այդ, հաշվեքննողները ԲԷՑ-ի «Mulberry» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգում հայտնաբերել են կապալառուի կողմից ԲԷՑ-ի տնօրենին ուղղված 2019 թվականի փետրվարի 25-ի թիվ 659 գրությունը, որը վերահաստատում է հաշվեքննությամբ արձանագրված փաստերը: Գրության մեջ նկարագրված են հանցագործության առերևույթ հատկանիշների կասկածներ պարունակող՝ ԲԷՑ-ի պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված արարքներ:

33 տոննա ալյումինե հաղորդալարի պակասուրդի մասով

Հաշվեքննությամբ արձանագրվել է.

ա) «Նորատուս» և «Լիճք» օդային գծերի հատվածների մասով ելակետային և կշռման տվյալների համադրմամբ ի հայտ է եկել մոտ 33տ ալյումինե հաղորդալարի պակասուրդ:

բ) ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի հրամանի հիման վրա ապամոնտաժված գույքի հանձնման և ընդունման վերաբերյալ տեղեկատվությունը խեղաթյուրված է, իսկ ապամոնտաժված ապրանքանյութական ակտիվները չեն գույքագրվել, չափագրվել և դրանց սկզբնական հաշվառման փաստաթղթեր չեն կազմվել:

V. Հայաստան-Վրաստան հաղորդիչ գծի/ենթակայանների ստեղծման ծրագիր

Ծրագիրը ՀՀ-ում սկսել է քննարկվել ավելի քան 10 տարի առաջ: Ռազմավարական նշանակության տարբեր փաստաթղթերում արձանագրվել է ծրագրի նպատակների կարևորությունը: Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ տարվել են տարբեր բանակցություններ գումարներ ներգրավելու նպատակով: Տրվել են տարբեր հիմնավորումներ: Ծրագիրը ներառված է եղել ՀՀ կառավարության 2017թ. և 2018 թ. գերակա խնդիրներում:

2013-2015թթ. ընթացքում ՀՀ ԱԺ-ն վավերացրել է ծրագրի ֆինանսավորման երեք միջազգային պայմանագիր, որի շրջանակներում կնքվել են վարկային և դրամաշնորհային մի շարք համաձայնագրեր ընդամենը՝ 188.7 մլն եվրո արժեքով, որից 178.7 մլն եվրոն՝ վարկային միջոցներ, 10 մլն եվրոն՝ դրամաշնորհ, ինչպես նաև փորձագիտական ծառայությունների համար դրամաշնորհ 820.0 հազ. եվրոյի չափով:

Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով ԲԷՑ-ը Ֆիխտներ գերմանական ընկերության հետ կնքել է 6.4 մլն եվրո արժեքով խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր (ավարտը՝ 15.08.2019թ.): Խորհրդատուին ծրագրի վարկային և դրամաշնորհային միջոցներից 30.09.2018թ. դրությամբ փաստացի վճարվել է մոտ 2 մլն եվրո:

ԲԷՑ-ի միջոցներով ծրագրի իրականացման համար Այրում և Դմաշեն համայնքներում ձեռք է բերվել մոտ 641.4 հազ. եվրո արժեքով հողեր, ինչպես նաև ընկերության միջոցներից ֆինանսավորվել է ծրագրի կառավարման վճարը՝ մոտ 1.6 մլն եվրո:

Հաշվեքննության առավել ուշագրավ փաստեր

ա) 21.02.2017թ.-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում հանձնարարվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին դադարեցնել Հայաստան-Վրաստան ծրագիրը՝ այն համարելով «ոչ նպատակահարմար» (արձանագրության մեջ պատճառներ և հիմնավորումներ նշված չեն): Դադարեցման պահին ծրագրի տարբեր աղբյուրներից արդեն ծախսվել էր ավելի քան 5.5 մլն եվրո, այդ թվում՝ ԲԷՑ-ի միջոցներից վճարվել էր մոտ 1.2 մլն եվրո գումար՝ որպես վարկերի չօգտագործված մասի տոկոս:

բ) Գլխավոր կապալառուի ընտրության մրցութային գործընթացի դադարեցումը չի իրականացվել KFW բանկի գնումների ուղեցույցի պահանջներին համապատասխան: Հատկանշական է, որ ծրագրի դադարեցնելու մասին հանձնարարականը հաջորդել է մրցութային հայտերի ընդունման փուլին: Արդյունքում, հայտատուների ֆինանսական առաջարկները չեն բացվել, իսկ հայտերի և դրանց ապահովման երաշխիքների ժամկետներն ավարտվել են:

գ) KFW բանկի հաշվարկների համաձայն՝ վարկային ծրագրերի դադարեցման մասով տույժը վարկառուի նկատմամբ կազմում է առնվազն 13.9 մլն եվրո:

դ) 2018թ. մարտի 14-ին ՀՀ էներգետիկայի համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության տեխնիկական հանձնաժողովը հաստատել է ծրագրի նոր փուլեր, որոնք, KFW բանկի պաշտոնական դիրքորոշման համաձայն, չեն համապատասխանում վարկային և ծրագրային համաձայնագրերի նպատակներին, հատուկ համաձայնագրով սահմանված փուլերին, ինչպես նաև խորհրդատուի հետ կնքված պայմանագրի տեխնիկական պահանջներին:

ե) Հաշվեքննության ավարտի դրությամբ վարկային և դրամաշնորհային համաձայնագրերում որևէ փոփոխություն չի իրականացվել:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
02.07.18-31.03.19թթ.	01.01.17-01.10.18թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	2	7
Հաշվեքննության կարծիք		
Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք		

Առավել ուշագրավ փաստեր

- Փրկարար ծառայությունն իր կարիքների համար գնված 11,745.2 հազ. դրամի 33,000 լիտր բենզինը հատկացրել է նախարարության համակարգի այլ ավտոմեքենաներին, իսկ գործուղումների համար հատկացված միջոցներից 14,503.3 հազ. դրամը վճարել է նախարարության այլ ստորաբաժանումների աշխատողներին:
- Հարկերը վճարելու համար հատկացված միջոցներով գնվել են 21,387.4 հազ. դրամի՝ գնումների պլանով չնախատեսված ապրանքներ:
- Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը 2017 թվականին նախատեսել էր իրականացնել ստուգումներ տարբեր ոլորտների 496 կազմակերպությունում, սակայն ստուգումներն իրականացվել են միայն 58 գազալցակայաններում: Բոլոր կազմակերպություններում տեսչությունը հայտնաբերել է հրդեհային անվտանգության կանոնների խախտումներ, սակայն ցուցաբերել է անհավասար մոտեցում և օրենքի պահանջին ոչ համապատասխան 39 դեպքում օրենքով սահմանված տուգանքները չի նշանակել: Պարզվել է նաև, որ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցված ավելի քան 18,000

արտադրական վտանգավոր օբյեկտներից շահագործվող շուրջ 6,000 օբյեկտներ 2017 թվականին չեն անցել տեխնիկական անվտանգության պարտադիր փորձաքննություն, իսկ տեսչությունը դրանց նկատմամբ չի նշանակել օրենքով նախատեսվող տուգանքներ՝ գումարային տեսքով 6.0 մլրդ դրամի: Բացի այդ, ռեեստրում չգրանցվելու համար տեսչությունը 237 հակակարկտային կայանների նկատմամբ չի նշանակել գումարային՝ 237.0 մլն դրամի տուգանք:

- 2010 թվականին Վերահսկիչ պալատի վերահսկողության արդյունքներով արձանագրվել էր, որ վնասաբեր կարկուտներից պաշտպանության համար օգտագործվող գազագեներատորային հակակարկտային կայանները արդյունավետ չեն, և առաջարկել էր ՀՀ կառավարությանը հակակարկտային պաշտպանության համար կիրառել ավելի արդյունավետ մեթոդ: Հաշվեքննության ավարտի դրությամբ՝ հակակարկտային պաշտպանությունն իրականացվում է նույն մեթոդով: Անցած տարիների ընթացքում այդ կայանների թիվն ավելացել է 13 անգամ և այժմ տեղակայված են 547 այդպիսի կայաններ, որից Հիդրոմետ ծառայությանը պատկանում են 1.4 մլրդ դրամ բյուջետային միջոցներով ձեռք բերված 192 հատ գազագեներատորային հակակարկտային կայաններ: Ընդ որում, գյուղատնտեսությունը միայն 2015-2018 թվականներին վնասաբեր կարկուտներից կրել է 60 մլրդ դրամից ավելի վնասներ, և փաստորեն տարիներ շարունակ հանրապետությունում հակակարկտային պաշտպանությունը եղել է անարդյունավետ:

- Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատողների պաշտոնային դրույքաչափերը 2-ից 4 անգամ գերազանցում են Նախարարության մնացած ՊՈԱԿ-ներում նույն պաշտոններում աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը: Անգամ այդ պայմաններում ՊՈԱԿ-ի աշխատողներին 2017 թվականի հունիսից սկսած ամեն ամիս առանց հիմնավորման վճարվել են հավելավճարներ՝ 19,287.7 հազ. դրամի չափով:

- Ընդհանուր առմամբ, Հաշվեքննիչ պալատի կարծիքով բյուջետային միջոցները տնտեսելու նպատակով անհրաժեշտ է վերանայել և օպտիմալացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՊՈԱԿ-ների հաստիքացուցակները և տարանջատել պետական գործառույթները ձեռնարկատիրական գործունեությունից:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը	Ստուգման օբյեկտը
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ

Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
06.07.18-15.04.19թթ.		01.01.16-30.09.18թթ.
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Համաշխարհային բանկի աջակցությամբ, ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքների արտավայրերի ջրարբիացում, ցանցերի կառուցում և դաշտային ճանապարհների անցանելիության ապահովում	Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են գնում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
0	3	11
Հաշվեքննության կարծիք		
Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է ոչ լիարժեք եզրահանգում կարծիք		

Առավել ուշագրավ փաստեր

- 54 օբյեկտների նախահաշվային արժեքները ավելի են հաշվարկվել 286,077 հազ. դրամով, որոնցից 33 դեպքով պայմանագրային գները գերազանցել են ճշտված նախահաշվային արժեքները 196,053 հազ. դրամով:
- Կատարողական ակտերով ավելի է հաշվարկվել 27,456 հազ. դրամ:
- Մեկ օբյեկտի գծով, որի համար դեռևս կատարողական ակտ չէր կազմվել, պայմանագրային գինն ավելի է հաշվարկվել 8,918 հազ. դրամով:
- Նվազեցվող աշխատանքների պայմանագրային միավոր գները նախահաշվային արժեքներից ցածր գնահատելու, իսկ ավելացվող աշխատանքների միավորի գները նախահաշվային արժեքներից բարձր գնահատելու արդյունքում տեղի է ունեցել աշխատանքների թանկացում 25,550 հազ. դրամի չափով:
- Հիմքերի տեղադրման նախագծային խորության մեծությունը սխալ արձանագրելու արդյունքում առանց հիմնավորումների կատարվել են 3,468 հազ. դրամի լրացուցիչ աշխատանքներ:
- Նախագծերում, որոնց համապատասխանությունը գործող նորմերին և ստանդարտներին երաշխավորվել են փորձագիտական եզրակացությամբ,

կատարվել են 15,027 հազ. դրամի այնպիսի փոփոխություններ, որոնք կհամարվեն հիմնավոր միայն նախագծերը նորմերին և ստանդարտներին չհամապատասխանելու դեպքում:

- Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում կապալառուների դիմումով կատարված լրացուցիչ ուսումնասիրությամբ չի հաստատվել փափուկ բնահողերի փոխարեն ժայռային բնահողերի ի հայտ գալու կասկածը և չի փոխվել բնահողի կարգը, սակայն որպես լրացուցիչ աշխատանք փափուկ բնահողերի համար վճարել են ոչնչով չհիմնավորված ժայռային բնահողերի փխրեցման աշխատանքներ 4,512 հազ. դրամի չափով:
- Կատարվել է ջրարբիացման ծրագրից դուրս 6,083 հազ. դրամի լրացուցիչ աշխատանք՝ խմոցը կառուցվել է ոչ թե ծրագրով նախատեսված արոտավայրերում, արոտի ժամանակ անասնահոտը ջրելու համար, այլ բնակավայրում, որոշակի մարդկանց գոմերին մոտ՝ գոմերի անասուններին ջրելու համար:
- Կապալառուների գնահատմամբ հեղեղ որակված հորդառատ տեղումների հետևանքով նաև կապալառուների կողմից պայմանագրային պարտականությունները չկատարելու արդյունքում վնասված և դեռևս պատվիրատուին չհանձնված աշխատանքների համար կատարվել է 7,762 հազ. դրամի աշխատանքների կրկնակի վճարում, այն դեպքում, երբ գործող օրենսդրությամբ, պայմանագրի պահանջների և վարկատու կազմակերպության ընթացակարգերի համաձայն, այն վճարման ենթակա չէ և այդ կորուստը հանդիսանում է կապալառուի ռիսկը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առանց որևէ առաջարկի, հիմնավորման և անհրաժեշտության կատարված փոփոխության արդյունքում հաշվարկվել է 3,557 հազ. դրամի կատարողական:
- 9 օբյեկտներում կատարված աշխատանքների փաստացի վիճակների ուսումնասիրությամբ պարզվել է, որ 6 օբյեկտներում փաստացի տեղում կատարվածից կատարողական ակտերով այլ աշխատանքներ և ավելի ծավալներ ցույց տալու արդյունքում ավելի է հաշվարկվել 13,410 հազ. դրամ: Բացի այդ, երկու օբյեկտում հայտնաբերվել է 936 հազ. դրամի կրկնակի կատարման ենթակա աշխատանք:

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ առողջապահության նախարարություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

Հաշվեքննությունն ընդգրկող
ժամանակաշրջանը

06.07.18-28.12.18թթ.		01.01.17-31.10.17թթ.	
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման գործընթաց		Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
1	2	3	
Հաշվեքննության կարծիք			
Համապատասխանության հաշվեքննության մասով տրամադրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք: Չի պահպանվել կատարողականի հաշվեքննության նպատակային արդյունավետության սկզբունքը:			

Առավել ուշագրավ փաստեր

- Իրավաբանական անձանց կողմից ստացված բժշկական օգնության և սպասարկման իրականացման 401 լիցենզիաներից 268-ի մասով չեն ներկայացվել համապատասխան մասնագետների մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի չներկայացնելը հիմք է լիցենզիայի կասեցման համար: Սակայն մի շարք կազմակերպություններ ոչ միայն իրականացրել են գործունեություն, այլ նաև լիցենզավորման ենթակա այդ գործունեության մասով պետպատվերի շրջանակներում պետական բյուջեից ստացել են ֆինանսավորում: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մասնագետներին տրամադրվել են լիցենզիաներ՝ առանց մասնագիտական որակավորման ստուգումների:
- Լիցենզավորման գործակալությունը իր իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում 67 դեպքով տվել է բացասական եզրակացություն առ այն, որ ներկայացված հայտերը բազմաթիվ կետերով չեն բավարարում ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման պահանջներին, սակայն լիցենզավորող հանձնաժողովը, անտեսելով այդ բացասական եզրակացությունները, փակ գաղտնի քվեարկությամբ տվել է դրական եզրակացություն, և անձինք լիցենզավորվել են:
- Լիազոր մարմինը (ՀՀ առողջապահության նախարարություն) լիցենզավորվող անձանց մոտ՝ տեղում, լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ ուսումնասիրություններն իրականացնում է հայտատուների 80 տոկոսի շրջանում: Տեղում ուսումնասիրվող 80% չափի և չուսումնասիրվող 20% չափի հարաբերակցությունների սահմանման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից որևէ իրավական ակտ չի ընդունվել: Նշված մեթոդի հիման վրա լիցենզիա տալու համատեքստում ստուգումներ չեն իրականացվել 95 հայտատուների մոտ: Նույն խնդիրն առկա է եղել նաև դեղատնային գործունեության

լիցենզավորման հետ կապված, որի արդյունքում ստուգումներ չեն իրականացվել 57 հայտատուների մոտ:

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ առողջապահության նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
06.07.18-28.12.18թթ.	01.01.17-30.09.18թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթաց	Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	2	2
Հաշվեքննության կարծիք		
Չի պահպանվել կատարողականի հաշվեքննության նպատակային արդյունավետության սկզբունքը:		

Առավել ուշագրավ փաստեր

- Դեղատնային գործունեության համար տրամադրված 410 լիցենզիաներից 159-ի մասով չէին ներկայացվել որակավորում ունեցող դեղագետ կամ դեղագործ աշխատակիցների մասին տվյալներ (դրանց չտրամադրումը լիցենզիայի կասեցման հիմք է): Սակայն պարզվել է, որ այդ ընկերություններն աշխատում են և իրականացնում դեղատնային գործունեություն:
- Հաշվեքննությամբ պարզվել են դեպքեր, երբ փաստաթղթերով որպես վարձու աշխատակից ներկայացված անձինք միաժամանակ աշխատել են տարբեր կազմակերպություններում միևնույն ժամային գրաֆիկներով: Առկա է ռիսկ, որ աշխատանքային պայմանագրերի ներկայացման գործընթացն արժանահավատ չէ:
- Առկա են դեպքեր, երբ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը լիցենզավորման համար ներկայացրել են համապատասխան որակավորում ունեցող միևնույն անձանց տվյալները, որոնք ունեցել են որակավորում պահանջող համապատասխան փաստաթուղթը (դիպլոմը), բայց այդ անձանց մասով ներկայացված տարբեր աշխատանքային պայմանագրերում առկա են տարբեր անձնագրային տվյալներ և հաշվառման հասցեներ: ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունից ստացված տվյալների համաձայն՝ կնքված

աշխատանքային պայմանագրի մեջ նշված որոշ անձնագրային տվյալներ գոյություն չունեն:

- Լիցենզիաները տրամադրվել են՝ առանց մասնագետների մասնագիտական որակավորման ստուգումների, ինչպես պահանջում է լիցենզավորման կարգը:

ՀՀ ԲՆԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ բնապահպանության նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
06.07.17-29.03.18թթ.	01.01.17-30.09.18թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
3	6	7
Հաշվեքննության կարծիք		
Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների մասով տրամադրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք		

Առավել ուշագրավ փաստեր

- Բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին 2017 և 2018 թվականներին տրամադրվել են, համապատասխանաբար, 137.6 մլն դրամ և 213.3 մլն դրամ սուբվենցիաներ: 2017թ.-ի գումարից 52.4 մլն դրամը, իսկ 2018թ.-ի գումարից 48.5 մլն դրամը ծախսվել են օրենքով չնախատեսված միջոցառումների իրականացման համար՝ այդ թվում բազմաբնակարան շենքերի տանիքների ներկապատում, ասֆալտապատում, շուկայի կառուցում, փողոցների հենապատերի և ճեմուղիների վերանորոգում:

- Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) կողմից ֆինանսավորվող և «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» դրամաշնորհային ծրագրով, որի գումարը 2017 թ.-ին կազմել է 1.84 մլն եվրո, նախատեսված 34

գործողություններից չի կատարվել 958,000 եվրո ընդհանուր արժողությամբ 21 գործողություն: 2018 թ.-ի գումարը կազմել է 1.85 մլն, իսկ նախատեսված 28 գործողություններից չի կատարվել շուրջ 1 մլն եվրո ընդհանուր արժողությամբ 19 գործողություն:

- ՀՀ-ում գործող շուրջ 178 ձկնաբուծարաններից ընտրանքային կարգով 28-ում կատարված դիտարկման արդյունքում պարզվել է, որ թույլատրելի 104.5մլն մ³-ի փոխարեն օգտագործվում է դրանից 88.4 մլն մ³-ով ավելի ջուր: Բացի այդ, օրենքով նախատեսված երկրորդային ջրօգտագործման խթանման նորմերի չկիրառման հետևանքով միայն վերոնշյալ 28 ձկնաբուծարանների կողմից օգտագործվող շուրջ 185 մլն մ³ ջուրն Արաքս գետով դուրս է հոսում ՀՀ տարածքից: ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության առանցքային գործառույթներից է ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարումը, որը սակայն իրականացվում է մասնակի: Արդյունքում խնդիրներ են առաջանում ջրօգտագործման թույլտվություններով սահմանվող ջրառի չափաքանակների հիմնավորման և ջրի ազգային քաղաքականության շրջանակներում միասնական ռազմավարության մշակման և արդյունավետ կառավարում իրականացնելու տեսանկյունից:

- ՀՀ բնապահպանության նախարարության պատվերով ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբուծության ինստիտուտը յուրաքանչյուր տարի հաշվառում է խեցգետնի պաշարները և որոշում դրա թույլատրելի որսաչափը: Այդ ծառայությունների համար Նախարարությունն ամեն տարի ինստիտուտին է վճարում 7.6 միլիոն դրամ: Սակայն Նախարարությունն այդ տեղեկատվությունը հաշվի չի առել և տրամադրել է թույլատրելի որսաչափը բազմակի անգամ գերազանցող թույլտվություններ:

- 2017-2018թթ-ին ՀՀ-ից փաստացի արտահանված խեցգետնի քանակը մի քանի անգամ գերազանցել է այդ ժամանակահատվածի խեցգետնի օրինական որսի թույլտվությունները: Օրինակ՝ 2018թ.-ի առաջին ինն ամիսների ընթացքում Սևանա լճից տրվել է 3 տոննա որսի թույլտվություն, այն դեպքում, երբ արտահանումը կազմել է 110.6 տոննա կամ շուրջ 37 անգամ ավելի քան օրինական որսը: Արդյունքում՝ արտահանող կազմակերպությունների ջրավազաններում առկա վայրի խեցգետնի մնացորդների, Հանրապետության բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության կողմից տրված վայրի խեցգետնի որսի թույլտվությունների ծավալի և ՀՀ արտահանման ծավալների համադրման արդյունքներով արժանագրվել է 63.1 տոննա ապօրինի որս: Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմում է 63.1 մլն դրամ:

- Համաձայն «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի պետական սեփականություն համարվող օբյեկտների օգտագործումն արդյունագործական (ոչ տնային) նպատակով վճարովի է և համարվում է լիցենզավորված գործունեություն: Լիցենզիան տրամադրում է ՀՀ բնապահպանության նախարարության

կենսառեսուրսների կառավարման գործակալությունը: 2017-2018թթ. ոչ մի ֆիզիկական կամ իրավաբանական անձ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մատուտակի հավաքի և օգտագործման թույլտվություն չի ստացել: Սակայն նույն ժամանակահատվածում ՀՀ-ից արտահանվել է 744.5 տոննա մատուտակ մերկ խոտաբույսի արմատ: Չվճարված բնօգտագործման վճարը կազմել է 148.9 մլն դրամ:

- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից, կիրառելով վարձավճարի տարբեր չափեր, վարձակալությամբ տրամադրվել են անտառային հողեր՝ անտառվերականգնման, տնկարան հիմնելու, ձկնաբուծության, մեղվաբուծության, կանաչապատման, անտառային տարածքի բարեկարգման, ջրի ակունքների պահպանման նպատակներով: Պայմանագրով սահմանված վարձավճարների գումարի չափի և Կառավարության որոշմամբ սահմանված նվազագույն վարձավճարների գումարի տարբերությունը 2017-2018թթ.-ի համար կազմել է 571,400.0 հազ. դրամ: 11 պայմանագրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2 դեպքում պայմանագրերով վարձակալված հողատարածքները օգտագործվում են ոչ նպատակային, 4 դեպքում հողատարածքներում չեն իրականացվում պայմանագրով նախատեսված որևէ աշխատանքներ, իսկ 2 դեպքում պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարումը չունի որևէ հիմնավորվածություն:

- «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը 2018 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ ունեցել է հողերի վարձակալությամբ (ներառյալ՝ կառուցապատման իրավունքով) տրամադրման 885 պայմանագիր: Ներդրումային ծրագիր ներկայացված է ուսումնասիրված 100 պայմանագրերից 31-ի դեպքում, որոնցում նախատեսված ներդրումների ընդհանուր արժեքը կազմում է 3,653,400.0 հազ. դրամ: Ներդրումային բիզնես ծրագրերով գործերի ուսումնասիրությունից պարզվել է, որ որոշ բիզնես ծրագրերի իրագործումը պարունակում է ռիսկեր, մասնավորապես, 9 դեպքով նախատեսված չէ ներդրումային ծրագրերի ժամանակացույց, 11 դեպքով ընդհանրապես չեն կատարվել ներդրումներ, և 3 դեպքով բացակայում են ներդրումային ծրագրերը, սակայն վարձակալության պայմանագիրը երկարացվել է մինչև 2060թ.-ը: Աշխատանքների կամ ներդրումների մեծ մասը նախատեսվում է իրականացնել պայմանագրի ժամկետի վերջում:

- «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը 2018 թ.-ի դրությամբ ունեցել է վարձակալությամբ (ներառյալ՝ կառուցապատման իրավունքով) տրամադրված թվով 65 պայմանագիր: Ներդրումային ծրագիր ներկայացված է կնքված պայմանագրերից 50-ի դեպքում, որոնցում նախատեսված ներդրումների համախառն արժեքը կազմում է 5.2 մլրդ. դրամ: Ծրագրերով նախատեսված ներդրումները հիմնականում նախատեսված է իրականացնել առանց ժամանակահատվածի հստակեցման:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտները

ՀՀ բնապահպանության նախարարություն և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, ՀՀ կրթության նախարարություն և ՀՀ կրթության տեսչական մարմին, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն և ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին

Հաշվեքննության կատարման ժամկետը

06.07.18-28.12.18թթ., 28.09.18-28.12.18թթ.

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

01.01.17-30.09.18թթ.

Հաշվեքննության առարկան

- Շրջակա միջավայրի պահպանմանն ու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեություն
- Առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեություն
- Կրթության բնագավառում ֆինանսատնտեսական գործունեություն
- Ոչ պարենային արտադրանքի, թանկարժեք մետաղների և չափումների միասնականության ապահովմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեություն

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են գնում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Համակարգին միտված առաջարկություններ

39

Արդյունքին միտված առաջարկություններ

24

Խնդիրներին միտված առաջարկություններ

45

Հաշվեքննության կարծիք

Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:

Չեն պահպանվել կատարողականի հաշվեքննության տնտեսման, նպատակային արդյունավետության և ծախսային արդյունավետության սկզբունքները:

Առավել ուշագրավ փաստեր

Տեսչական բարեփոխումները Հայաստանում մեկնարկել են 2009 թվականից: Նոր տեսչական մարմինները, պետք է աշխատեին նոր մոտեցումներով, ձևաչափերով, նոր ընթացակարգերի մշակմամբ և ամբողջացմամբ, ներդրվեր ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, ստուգումների գործընթացներում գործարկվեին ստուգաթերթեր, ինչը սակայն չի իրականացվել:

Տեսչական մարմինները մեծամասամբ ձևավորվել են էական ժամկետային ուշացումներով, գործունեությունը սկսել են առանց հաստատված տարեկան ծրագրերի, ստուգաթերթերի, ստուգումների մեթոդաբանության, իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների և այլ անհրաժեշտ հիմնարար քայլերի: Տեսչական մարմիններում պատշաճ կերպով չի իրականացվել գույքի, ինչպես նաև ստուգումների փաթեթների հանձնում-ընդունում: Տեսչական մարմիններից մի քանիսում բացակայում է նաև ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը: Կատարված ստուգումները հիմնականում չեն արտացոլում ոլորտում առկա բոլոր հնարավոր ռիսկերը: Ստուգումները եղել են խիստ հատվածային, երբեմն նաև ձևական:

Արձանագրված ինստիտուցիոնալ խնդիրների և ստուգումների թերակատարմանը զուգահեռ, տեսչական մարմինները կատարել են ծախսեր, որոնց արդյունավետությունը ցածր է կամ անհասկանալի: Արդյունավետ չի եղել նաև սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը: Մասնավորապես.

1. ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի վերաբերյալ

- Տեսչական մարմինն ունի 195 աշխատակից, իսկ պահպանման ծախսերը կազմել են 685,456.8 հազ. ՀՀ դրամ: Մինչդեռ նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի ստուգումների արդյունքում պետական բյուջե վերականգնվել է ընդամենը 168,406.2 հազ. դրամ ՀՀ դրամ, չնայած այն հանգամանքին, որ Տեսչական մարմնի կողմից հաշվարկվել է, ընդհանուր առմամբ, շուրջ 3,137,012.6 հազ. ՀՀ դրամի չափով պետությանը պատճառված վնաս:

- Տեսչական մարմինը 2017թ.-ին չի իրականացրել 722 ստուգումներից ոչ մեկը, իսկ 2018թ.-ին իրականացրել է 250 ստուգումներից 35-ը: Օրինակ՝ Տեսչության Գեղարքունիքի մարզի տարածքային բաժնում աշխատում է 9 աշխատակից, որոնց կողմից 2017-2018թթ. արձանագրվել են Սևանա լճից խեցգետնի ապօրինի որսի 9 և սիգ տեսակի ձկան ապօրինի որսի 5 դեպքեր:

- Տեսչության կողմից 2017թ. -ին «Պահապան», «Դերձակ», «Էլաամողա» ՍՊԸ-ների հետ կնքվել են 9,598.0 հազ. ՀՀ դրամի հանդերձանքի գնման պայմանագրեր: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Տեսչությունը համազգեստ չեն կրում՝ չափսերի անհամապատասխանության և համազգեստի որակազրկված լինելու պատճառով:

- Բնապահպանության տեսչությունը պարտավոր էին ստուգումների ժամանակ առգրավված բնական ռեսուրսները, արագ փչացող առգրավված կենսառեսուրսները հանձնել մանկատներ, ծերանոցներ և թանգարաններ, իսկ որոշ առգրավված ռեսուրսներ պետք է իրացվեին և գումարը մուտքագրվեր պետական բյուջե, սակայն նման ոչ մի գործողություն չի իրականացվել: Տեսչության կողմից չեն իրականացվել

նաև ՀՀ տարածքում շահագործվող հազարավոր տրանսպորտային միջոցների՝ մթնոլորտ վնասակար արտանետումների չափումները:

II. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի վերաբերյալ

- Տեսչական մարմինը, ունենալով 280 աշխատող և 2017թ.-ին՝ 736,783.1 հազ. ՀՀ դրամի, իսկ 2018թ.-ին՝ 380,217.5 հազ. ՀՀ դրամի պահպանման ծախսեր, 2017-2018թթ. ընթացքում ընդհանրապես որևէ ստուգում չի իրականացրել, ինչի արդյունքում վերահսկողությունից ամբողջությամբ դուրս են մնացել առողջապահության ոլորտը և աշխատանքային իրավահարաբերությունների դաշտը: Տեսչության կողմից 2017թ.-ին ՀՀ պետական բյուջե որևէ գումար չի մուտքագրվել, իսկ 2018թ.-ին պետական բյուջե մուտքագրվել է ընդամենը 1,470.0 հազ. ՀՀ դրամ:
- Տեսչության «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում տեղադրված են յուրաքանչյուրը 38,416.9 հազ. ՀՀ դրամ արժողությամբ հեռահար ջերմաչափման ստացիոնար սարքեր, որոնք տեղադրման հաջորդ օրվանից մինչ օրս չեն աշխատում:

III. ՀՀ կրթության տեսչական մարմնի վերաբերյալ

- Տեսչությունն ունի 41 հաստիք, պահպանման ծախսերը 2017-2018թթ. կազմել են 285,032. 3 հազ. ՀՀ դրամ, մինչդեռ նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի ստուգումների արդյունքում պետական բյուջե որևէ գումար չի մուտքագրվել:
- ՀՀ բուհերն ամբողջությամբ գտնվում են Տեսչական մարմնի վերահսկողությունից դուրս, քանզի Տեսչական մարմնին վերապահվել են վերահսկողական գործառույթներ միայն նախադպրոցական, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում: Մինչդեռ ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի կարևորագույն կետերից է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության համակարգը որակական նոր մակարդակի բերելը:

ՀՀ ԿԳՆ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից տրված տեղեկատվության վերլուծության արդյունքում Հաշվեքննիչ պալատը պարզել է, որ տեսչական վերահսկողության բացակայության պատճառով այնպիսի խոշոր ոչ պետական բուհերում, ինչպիսիք են օրինակ՝ «Հայբուսակ» համալսարանը, Ավանդական բժշկության համալսարանը, «Պրոգրես» համալսարանը, «Ուրարտու» համալսարանը, «Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան» համալսարանը և այլն, ռեկտորի, պրոռեկտորի, դեկանի պաշտոնները զբաղեցնում են գիտական կոչում, աստիճան չունեցող անձիք, ինչը կարող է անմիջականորեն ազդել բուհերի կողմից տրվող կրթության որակի վրա: Նամանավանդ այն պայմաններում, երբ պետական և ոչ պետական բուհերը տալիս են պետական նմուշի դիպլոմներ, որոնք հավասարազոր են:

IV. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի վերաբերյալ

- Տեսչությունն ունի 40 հաստիք, պահպանման ծախսերը 2017-2018թթ. կազմել են 273,592.5 հազ. ՀՀ դրամ, իսկ նույն ժամանակահատվածում տեսչության կողմից պետական բյուջե մուտքագրվել է 40,410.0 հազ. ՀՀ դրամ:
- ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը 2017թ.-ին իրականացրել է 200 ստուգումներից 144-ը, իսկ 2018թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ 240 ստուգումներից 160-ը. հիմնականում վերահսկել է բենզալցակայանների, ավտոգազալիցքավորման ճնշակայանների, օծանելիքի, կոսմետիկ արտադրանքի և խաղալիքների անվտանգության շուկաները, ինչի արդյունքում վերահսկողությունից դուրս են մնացել մնացած շուկաները:
- Տեսչական մարմնում առկա են թվով երկու շարժական լաբորատորիաներ, որոնք համալրված են համապատասխան սարքերով և սարքավորումներով: Տեսչական մարմնի շարժական լաբորատորիաների միջոցով տևական ժամանակ է լաբորատոր հետազոտություններ չեն իրականացվել, փոխարենը՝ դրանք, ընդհանուր առմամբ, 12,405.2 հազ. ՀՀ դրամի գումարի չափով պատվիրվել են «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ՄՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ)

Հաշվեքննության օբյեկտները	
ԵԱՏՄ անդամ պետությունների գանձապետական և մաքսային մարմիններ, Եվրասիական տնտեսական հանձնաժողով	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
01.03.19-29.11.19թթ.	01.01.18-31.12.18թթ.
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
ԵԱՏՄ ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրում և բաշխում, դրանք, որպես եկամուտ բյուջեներ փոխանցում	Իրականացվել է ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:

Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
5	1	3

2017 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվել են հետևյալ չափով.

- Հայաստանի Հանրապետության համար՝ 1.22 տոկոս,
- Բելառուսի Հանրապետության համար՝ 4.56 տոկոս,
- Ղազախստանի Հանրապետության համար՝ 7.055 տոկոս,
- Ղրղզստանի Հանրապետություն համար՝ 1.9 տոկոս,
- Ռուսաստանի Դաշնության համար՝ 85.265 տոկոս:

2017 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը կազմել է 11.6 մլրդ ԱՄՆ դոլար, որը 2016 թվականի համեմատ աճել է 18.5 %-ով: Ներմուծման մաքսատուրքերի մուտքի ամենամեծ աճը գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում, որը 2016 թվականի համեմատ կազմել է շուրջ 30.6%, Բելառուսի Հանրապետությունում այն կազմել է 24.9%, Ղազախստանի Հանրապետությունում՝ 8.4%, Ղրղզստանի Հանրապետությունում՝ 2.7% և Ռուսաստանի Դաշնությունում՝ 3.2%:

Անդամ պետությունների միջև փոխադարձ հաշվարկների սալդոն 2017 թվականին դրական է ձեւավորվել Հայաստանում, Ղազախստանում և Ղրղզստանում և կազմել է համապատասխանաբար 50.1 մլն ԱՄՆ դոլար, 189.5 մլն ԱՄՆ դոլար և 41.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ Բելառուսի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում սալդոն բացասական է և կազմել է համապատասխանաբար՝ 99.4 մլն ԱՄՆ դոլար և 181.9 մլն ԱՄՆ դոլար:

Առավել ուշագրավ փաստեր

- Ղազախստանի Հանրապետությունում ընդերքօգտագործողների կողմից 2014-2017թթ. վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարները (մոտ 30.0 մլն ԱՄՆ դոլար) Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից չեն բաշխվել ԵԱՏՄ անդամ պետությունների միջև: Արդյունքում չի կատարվել բարձրագույն վերահսկիչ մարմինների կողմից 2017 թվականի վերահսկողության արդյունքներով տրված հանձնարարականը:

- ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահին առաջարկել է քայլեր ձեռնարկել տարիներ շարունակ չկարգավորվող հարցի լուծման հնարավոր տարբերակի վերաբերյալ և առաջարկել է ՌԴ հաշվիչ պալատին, որպես 2018 թվականի համատեղ վերահսկողական միջոցառումների կազմակերպիչ, ԵԱՏՄ բարձրագույն

վերահսկիչ մարմինների անունից պաշտոնապես դիմել ԵԱՏՄ դատարան, որպեսզի խնդիրը կարգավորվի դատական կարգով: Սույն խնդիրը հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից բարձրացվել է նաև 2018 թվականի նոյեմբերի 29-ին ք. Մոսկվայում կայացած ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկիչ (հաշվեքննիչ) մարմինների համատեղ կոլեգիայի նիստի ընթացքում: Նիստի ընթացքում որոշվել է այդ հարցով դիմել ԵԱՏՄ դատարան, որպեսզի խնդիրը կարգավորվի դատական կարգով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՏՈ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին է տրամադրում ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկություն:

Նշված տեղեկությունը ՀՀ հաշվեքննիչ պալատը ստացել է 2018 թվականի ընթացքում հրապարակված բոլոր ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ (բացառությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքում հաշվեքննության ընթացիկ եզրակացության վերաբերյալ, որի մասին սահմանված կարգով Հաշվեքննիչ պալատը տեղեկացրել է Ազգային ժողովին և Կառավարությանը) և օրենքով սահմանված կարգով՝ տեղեկատվությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան ընթացիկ եզրակացության հետ միասին ներկայացրել է ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն:

Այս քայլով գործող օրենսդրական կարգավորումների համաձայն, ավարտվում է ՀՀ հաշվեքննիչ պալատի դերը հաշվեքննության հետհսկողություն (Follow up) բնագավառում: Սակայն Աուդիտի բարձրագույն մարմինների անկախության մասին Մեխիկոյի հռչակագրի 7-րդ սկզբունքն ամրագրում է հաշվեքննության հետհսկողության արդյունավետ մեխանիզմների անհրաժեշտությունը, մասնավորապես շեշտադրելով օրենսդրի կողմից Աուդիտի բարձրագույն մարմնի ընթացիկ եզրակացության հիման վրա հաշվեքննության հետհսկողության իրականացման և ուղղիչ միջոցառումների ձեռնարկման կարևորությունը:

Հաշվեքննության եզրակացությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտներից ստացված պատասխանների վերլուծությունները ցույց են տալիս, որ քիչ են եզրակացություններում արձանագրված փաստերի վերաբերյալ համարժեք արձագանքները: Դրանց մի մասն իրենից ներկայացնում է հավաստում հայտնաբերված խնդիրների շտկման վերաբերյալ, մի մասը՝ անդրադարձ, թե ինչու չեն կարող իրականացնել այս կամ այն առաջարկությունը, իսկ շատ դեպքերում էլ՝ ներկայացված եզրակացություններին և առաջարկություններին, ընդհանրապես, անդրադարձ չի կատարվում կամ տրվում են հիմնազուրկ բացատրություններ: Այս առումով առավել մանրամասն նկարագրելու համար իրավիճակը, ստորև ներկայացվում են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում կատարված հաշվեքննության (ստուգման) օրինակով մի շարք փաստեր:

Ընդունված անհամապատասխանություններ, խեղաթյուրումներ և դրանց կապակցությամբ առաջարկություններ:

Ներկայացված դիրքորոշմամբ Ընկերությունը, ըստ էության, պատրաստակամություն է հայտնել քննարկել միայն ընկերության գործունեության արդյունավետությանն ուղղված Հաշվեքննիչ պալատի առաջարկությունները, միաժամանակ հայտնել է, որ Հաշվեքննիչ պալատի առաջարկությունները ընդունվում են ի գիտություն և առկա խնդիրների վերացման ուղղությամբ կկատարվեն գործուն քայլեր:

Ընկերությունը չի ընդունել հաշվեքննիչ պալատի եզրակացությամբ ներկայացված անհամապատասխանությունները, խեղաթյուրումները և առաջարկությունները:

Ընկերությունը իր ներկայացրած դիրքորոշմամբ չի ընդունել որոշ անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, որը, մասնավորապես, վերաբերվել է Իրան-Հայաստան 400կՎ երրորդ գծի կառուցման ծրագրի հաշվետվողականությանը, վարկային միջոցները օտարերկրյա պետության և միջազգային վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված չլինելու անհասկանալի մեկնաբանությամբ:

Ընկերությունը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ ծրագիրն իրականացվել է հիմք ընդունելով ՀՀ և ԻԻՀ նախագահների կողմից 2005թ. ստորագրված հուշագիրը, որ Իրանի Արտահանման Զարգացման բանկը պետական բանկ է և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որպես վարկի վերադարձելիության ապահովում թողարկվել է բյուջետային երաշխիք, ինչը բավարար հիմք է տրամադրված ֆինանսավորումը, որպես Իրանի Իսլամական Հանրապետության կողմից տրամադրված վարկ համարելու համար: Միաժամանակ՝ պետական կառավարման մարմիններին ծրագրի վերաբերյալ հաշվետվողականության գործընթացի չապահովման հետևանքով, ծրագիրը դուրս է մնացել պետական վերահսկողությունից, որը հակառակ պարագայում գուցե այսքան խնդիրներ չառաջացներ:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի մասով Կապալառուի նկատմամբ տույժերի պահանջ չներկայացնելու գործողություններն Ընկերությունը պայմանավորել է կապալառուի հետ 26.12.2018թ. կնքված համաձայնագրով: Նշած համաձայնագիրը կնքվել է պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի խախտման օրվանից շուրջ երկու տարի անց, ընդ որում, համաձայնագրով պատասխանատվության միջոցներ չկիրառելու մասով համաձայնություններ ձեռք չեն բերվել, փոփոխությունը հիմնականում կատարվել է վճարումներ ապահովելու նպատակով, ուստի ընկերության բերած հիմնավորումները և արտահայտած անհամաձայնությունը անհիմն են:

Ընկերությունը չի հերքել ներկայացված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները: Ներկայացված դիրքորոշմամբ Ընկերությունն անդրադարձել է

մի շարք վարկային ծրագրերի և գնումների մասնավոր դեպքերի, որով վերջինս չի հերքել անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կատարված փաստարկները: Արձանագրված խնդիրների ուղղությամբ չի ներկայացվել որևէ գործողություն իրականացնելու մտադրություն, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել փաստերի վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը և հետագա գործողությունները:

Ընկերությունը չի անդրադարձել ներկայացված անհամապատասխանություններին և խեղաթյուրումներին: Ներկայացրած դիրքորոշմամբ ընկերությունն արտահայտել է ընդհանրական պատրաստակամություն անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ուղղությամբ ուսումնասիրություն կատարելու համար և միայն դրանց արդյունքների հիման վրա օրենսդրությամբ քայլեր կատարելու հանձնառություն:

Ընկերության ներկայացրած դիրքորոշումն, ըստ էության, չի արտահայտում հստակ կարծիքներ, հաստատումներ և մերժումներ, որոշ հարցերով ներկայացվել են միայն անհիմն մեկնաբանություններ և հետագայում անորոշ ու ոչ չափելի գործողություններ կատարելու ցանկություն: Արդյունքում, սահմանափակվում և անորոշ են դառնում ՀՀ հաշվեքննիչ պալատի հետհաշվեքննության գործողությունների, գնահատումների և վերլուծությունների շրջանակները:

Այսպիսով, մի կողմից հաշվի առնելով հաշվեքննության հետհսկողության գործառույթի խիստ կարևորությունը, մյուս կողմից ներկայումս դրա իրականացման համար ՀՀ օրենսդրության ընձեռած սահմանափակ հնարավորությունները, օրակարգային է դառնում գործող օրենսդրական կարգավորումների բարեփոխման հարցը: Այդուհանդերձ, Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության ծրագրով նախատեսվել է հաշվեքննության արդյունքների վերլուծությունների իրականացում, որի շրջանակներում Հաշվեքննիչ պալատը կփորձի անդրադառնալ նաև հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքներին:

Հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքը ներառում է նաև ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցությունը: Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների ՀՀ գլխավոր դատախազությունը հաշվեքննությամբ (վերահսկողությամբ) արձանագրված և տրամադրված նյութերի հիման վրա կայացված որոշումների վերաբերյալ գրավոր տեղեկացնում է Հաշվեքննիչ պալատին: ՀՀ գլխավոր դատախազությունը 2019 թվականի մայիսի 3-ին ներկայացրել է համապատասխան տեղեկատվություն, որն իր մեջ ներառում է 2017-2019 թվականների ընթացքում իրականացված հաշվեքննությամբ (վերահսկողությամբ) արձանագրված նյութերով դատախազական մարմինների կողմից իրականացված գործողություններին:

Մասնավորապես.

- ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազությունում հարուցվել է 7 քրեական գործ՝ խաբեության եղանակով առանձնապես խոշոր չափերի, ընդհանուր առմամբ 1.379.4 մլն ՀՀ դրամի վնաս պատճառելու և պետական ծառայություն իրականացնող պատասխանատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների կողմից այլ ծանր հետևանքներ առաջացրած պաշտոնեական անփութություն կատարելու, այսինքն՝ այնպիսի հանցավոր արարքների համար, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 315-րդ հոդվածի 2-րդ մասով:
- «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասով արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 1 քրեական գործ:
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագրի մասով արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազությունում խախտումների փաստերի 7 դրվագներով կազմված փաստաթղթերը ուղարկվել են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Արարատի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերի դատախազություններ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու հարցերը քննարկելու և հետագա ընթացքը լուծելու համար:

Արդյունքում Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերի դատախազություններ ուղարկված տվյալներով հարուցվել է 6 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի (խարդախության) և 315-րդ հոդվածի 1-ին մասի (պաշտոնական անփութության) հատկանիշներով: Հարուցված քրեական գործերը կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով: Միաժամանակ, տավարաբուծության ծրագրի վերաբերյալ բացահայտված թերությունների և բացթողումների կապակցությամբ համապատասխան հաղորդում է ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ թերությունները շտկելու և ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազների նախաձեռնությամբ ուսումնասիրվել են ՀՀ վերահսկիչ պալատի կողմից հրապարակված հաշվետվությունները: Մասնավորապես, «Մելրոացիա» ՓԲԸ-ում արձանագրված խախտումների և խախտումները հիմնավորող

փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

- ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքում հաշվեքննության նյութերը ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից նշված գրությունը և կից փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ Արմավիրի մարզի դատախազություն՝ ՀՀ Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով քննվող թիվ 57100418 քրեական գործին կցելու և համատեղ ընթացքը լուծելու համար:

- «Հայաստան» համահայկական հիմնադրամում իրականացված ստուգման՝ հիմնադրամի կողմից կահույքի, կենցաղային տեխնիկայի, գուդրոնի, բիտումի և մազութի գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատից ստացված նյութերն ուղարկվել են ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտ՝ հիմնադրամի նախկին գործադիր տնօրենի կողմից լիազորությունները չարաշահելու դեպքերի առիթով հարուցված քրեական գործին կցելու և նյութերում առկա տեղեկությունները ստուգելու նպատակով անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար:

- ՀՀ գլխավոր դատախազություն փոխանցված ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում, ջրային պետական կոմիտեում և քաղաքացիական ավիացիայի կոմիտեում իրականացված հաշվեքննությունների արդյունքները դեռևս ուսումնասիրվում են՝ խախտումների, այդ թվում՝ հանցագործության հատկանիշների առերևույթ առկայությունը պարզելու և իրավական գնահատական տալու կամ դատախազական ներգործության այլ միջոցներ կիրառելու նպատակով:


ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՆԵԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է, որի գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Հաշվեքննիչ պալատը բաղկացած է յոթ անդամից՝ Հաշվեքննիչ պալատի նախագահից և վեց անդամից: Հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեությունն ապահովում է Հաշվեքննիչ պալատի նախագահը:

Հաշվեքննիչ պալատում գործում են գլխավոր քարտուղարը, հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներ, հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաև այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:

Հաշվեքննիչ պալատի անդամը, այդ թվում՝ Հաշվեքննիչ պալատի նախագահը համակարգում է հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներից մեկի կամ մի քանիսի աշխատանքները: Հաշվեքննիչ պալատի կառուցվածքը ներկայացվում է ստորև պատկերում:



Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Անցկացվել է Հաշվեքննիչ պալատի 33 նիստ, ներառյալ՝ նաև Վերահսկիչ պալատի խորհրդի նիստերը, որոնցից 20-ը՝ արտահերթ: 2018 թվականի ապրիլի 9-ից սկսած Հաշվեքննիչ պալատի բոլոր նիստերի օրակարգերը

երկու օր առաջ ուղարկվել են Ազգային ժողով և Կառավարություն: Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունվել է 193 որոշում, որոնցից գերակշիռ մասը՝ 169-ը (88%) առնչվում է հաշվեքննության գործընթացին, 8-ը՝ Հաշվեքննիչ պալատի գործունեության մեթոդական և իրավական ապահովմանը, 5-ը՝ անձնակազմի կառավարման հարցերին, և 11-ը՝ ֆինանսատնտեսական գործունեությանը: 2019 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում 2018 թվականի գործունեության ծրագրով իրականացվող հաշվեքննության առնչվող ևս 44 որոշում է ընդունվել Հաշվեքննիչ պալատի կողմից:

Թափանցիկության և հրապարակայնության սկզբունքի պահպանման նպատակով Հաշվեքննիչ պալատը 2018 թվականի ապրիլի 9-ից գործարկում է պաշտոնական ինտերնետային հետևյալ նոր կայքը՝ www.armsai.am:

Հաշվեքննիչ պալատի նիստերում կայացված որոշումները (բացառությամբ անհատական իրավական ակտերի, հաշվեքննության ու ստուգման առաջադրանքների) երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում:

Կայքում եղած հրապարակումների պատկերը ներկայացված է ստորև՝ աղյուսակում.

2018թ. պաշտոնական կայքում հրապարակված նյութերի վերաբերյալ	
Բովանդակություն	Հրապարակումների թիվ
Հաշվեքննիչ պալատի որոշումներ	35
Հաշվեքննիչ պալատի նիստերի լուսաբանում	19
Միջազգային հարթակներ և համագործակցություն	16
Թափուր աշխատատեղերի մասին	2
Վերլուծական նյութեր	2
Այլ տեղեկատվություն	8

Հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքները համալրվում են, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող պահանջները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հաշվեքննիչ պալատում հաստիքների առավելագույն քանակը 155-ն է: Հաշվեքննիչ պալատի մարդկային ռեսուրսների վերաբերյալ քանակական և որակական որոշ տվյալներ ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Աշխատակիցների տարիքային խմբերը

I. Աշխատակիցների տարիքային խմբեր	Քանակ	Տոկոս
1. 30-ից երիտասարդ	14	9.7%
2. 30-40 տարեկան	54	37.2%
3. 40-50 տարեկան	25	17.2%
4. 50-60 տարեկան	31	21.4%
5. 60-ից մեծ	21	14.5%
II. 15 տարի և ավելի պետական ծառայության ստաժ ունեցողներ	58	40.0%
III. Միջին տարիք	44.4	

Աշխատակիցների շարժը

Աշխատակիցների ընդհանուր շարժ (ընդամենը)	55
1. պետական ծառայության հաստիքներում աշխատակիցների շարժ	22
I. պետական ծառայությունից ազատված	14
II. պետական ծառայության ընդունված	8
2. պայմանագրային աշխատակիցների շարժ	33
I. պայմանագրային ազատված	10
II. պայմանագրային ընդունված	23

Աշխատակիցների որակավորման շրջանակը

Որակավորման բարձրագույն մասնակիցներ (ընդամենը)	83	43.4%
- արտերկիր սեմինարներ	3	2.1%
- գնումների թեմայով վերապատրաստումներ	22	15.2%
- պետական / քաղաքացիական ծառայության /	6	4.1%
- GIZ աջակցությամբ MS Excel ծրագիր	32	22.1%
- USAID աջակցությամբ IDEA ծրագիր	10	6.9%
- GIZ աջակցությամբ Գանձապետարանի LSOFT ծրագիր	10	6.9%

Հաշվեքննիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ կազմելով ծրագրի 99.6%-ը:

Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 21.6 մլն դրամն օգտագործվել է 99.8%-ով:

Հաշվեքննիչ պալատի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 14.5 մլն դրամ կազմելով ծրագրի 92.7%-ը:

2008 թվականից Վերահսկիչ պալատի անունով ՀՀ գանձապետական համակարգում գործել է «Պետությանը պատճառած վնասի փոխհատուցումից մուտքեր» եկամտային հաշիվը» (հ/հ 900005281515): Նկատի ունենալով, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության արդյունավետությունը չի չափվում հաշվեքննությամբ հայտնաբերված վերականգնման ենթակա գումարների չափով կամ դրանց գանձումով, պալատն օժտված չէ գանձումներ կատարելու գործառնությամբ, բյուջեի մուտքերի ապահովման գործընթացում պալատի դերն անուղղակի է, ինչպես նաև չկա պարտադրանքի մեխանիզմ համապատասխան մուտքերն ապահովելու նպատակով, Հաշվեքննիչ պալատը 2018 թվականի փետրվարին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը նշված հաշիվը փակելու կապակցությամբ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը փակել է հաշիվը:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են ամենամյա արտաքին աուդիտի՝ մրցութային հիմունքներով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից: Մրցույթը կազմակերպել է Ազգային ժողովի աշխատակազմը: Աուդիտի գործընթացն ավարտելուն պես Հաշվեքննիչ պալատը հրապարակելու է վերջինիս արդյունքների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:

2017 թվականի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

Շարունակվել է Վերահսկիչ պալատի կատարողականի ինքնագնահատման աշխատանքները: Ինքնագնահատումը իրականացվել է INTOSAI-ի կողմից մշակված Աուդիտի բարձրագույն ինստիտուտների (ԱԲԻ) կատարողականի գնահատման մեթոդաբանության հիման վրա (SAI PMF), որը ԱԲԻ-ներին տրամադրում է համակարգ իրենց գործունեության արդյունավետության կամավոր գնահատման համար՝ ԱԲԻ-ների միջազգային ստանդարտների (ISSAI) և հանրային հատվածի արտաքին աուդիտի ոլորտում ընդունված միջազգային լավագույն փորձի համապատասխան:

Նման գնահատումը կնպաստի Հաշվեքննիչ պալատի կարողությունների զարգացման բարելավմանը և գնահատման արդյունքները կօգտագործվեն նաև ՀՊ-ի ռազմավարական պլանի, ինչպես նաև աուդիտների տեխնիկական ձեռնարկների մշակման համար, որոնք կապահովեն ավանդական վերահսկողությունից սահուն անցումը աուդիտին:

Ինքնագնահատման արդյունքում կազմվել է հաշվետվություն, որի վերջնական տարբերակի՝ միջազգային հավաստիացում ստանալու ուղղությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում INTOSAI Զարգացման նախաձեռնության (IDI) գրասենյակի հետ: Միջազգային հավաստիացում ստանալուց հետո, 2019 թվականին, նախա-

տեսվում է հրապարակել ինքնագնահատման հաշվետվությունը և դրա հիման վրա մշակել Զարգացման ռազմավարության նոր հնգամյա ծրագիր:

Հաշվեքննիչ պալատը նպատակ ունի շարունակաբար օգտագործել այս գործիքը, մասնավորապես, 2019 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսել է կրկին իրականացնել արդեն Հաշվեքննիչ պալատի կատարողականի ինքնագնահատում, ինչը կօգնի հստակ հասկանալու, թե որ փուլում է գտնվում Հաշվեքննիչ պալատն իր կատարողականի և առաջընթացի առումով:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի կիրառման արդյունքում ի հայտ են եկել օրենսդրական որոշ «բացեր», որոնք նվազեցնում են հաշվեքննության իրականացման արդյունավետությունը: Բացի այդ, Հաշվեքննիչ պալատն ուսումնասիրել է հաշվեքննության միջազգային ստանդարտներն ու առաջավոր փորձը և արձանագրել է, որ գործող օրենսդրությունն ունի բարելավման կարիք: Այդ կապակցությամբ Հաշվեքննիչ պալատում մշակվել են համապատասխան օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, որոնք ներկայացվելու են օրենսդիր և գործադիր մարմիններին:

Հաշվեքննությունն ուղեկցվել է անհրաժեշտ մեթոդական և իրավական աջակցությամբ: Մշակվել և Հաշվեքննիչ պալատի համապատասխան որոշումներով հաստատվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝

- Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը
- Հաշվեքննիչ պալատի կանոնադրությունը
- Հաշվեքննիչ պալատի աշխատանքներում մասնագետների և փորձագետների ներգրավման կարգ
- Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը
- «Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից» հաշվեքննության նպատակներով տվյալների տրամադրման կարգ
- Հաշվեքննության և ստուգման առաջադրանքները հաստատելու մասին Հաշվեքննության որոշումների նախագծերի տիպային ձևեր
- Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի, գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության և ընթացիկ եզրակացության ձևանմուշները
- Հաշվեքննիչ պալատի նոր հաստիքացուցակն ու քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը:

«Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության» հիման վրա մշակվել և Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի

գործունեության ծրագիրը, որը հրապարակվել է Հաշվեքննիչ պալատի ինտերնետային կայքում:

Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողները ղեկավարվել են հաշվեքննության իրականացման համար «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, միաժամանակ չարգելված դեպքերում կիրառել են Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտներով նախատեսված հաշվեքննության հատուկ գիտելիքներ:

Հաշվեքննության որակն ապահովելու նպատակով հաշվեքննության ընթացքը (պլանավորման, միջանկյալ և վերջնական փուլերում) ուղեկցվել է կոլեգիալության սկզբունքներով պայմանավորված վավերացումներով և մասնագիտական ներքին հավաստիացումների փուլերով:

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝ Հաշվեքննիչ պալատի նախագահի հրամանով կառույցում ներդրվել է ներքին և արտաքին ազդարարման համակարգ: Գործընթացն իրականացվում է թափանցիկ և հրապարակային՝ Հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով: Հաշվեքննիչ պալատի գործունեության հետ կապված որևէ ներքին կամ արտաքին բնույթի կոռուպցիոն, շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումներ, հանրային շահերին ուղղված այլ վնասներ չեն արձանագրվել:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներին գանձապետական էլեկտրոնային համակարգից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով ցուցաբերվել է նաև վերլուծական աջակցություն, մասնավորապես վերլուծություններն իրականացվել են հաշվեքննության պլանավորման և անցկացման բոլոր փուլերում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ԾԻԳ-երի, ՊՈԱԿ-ների, Հիմնադրամների և բյուջեի հետ առնչություն ունեցած այլ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

Հաշվեքննիչ պալատի համար հասանելի է եղել նաև Իրավաբանական անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանը, որից ստացված տվյալների մշակմամբ հնարավոր է եղել բացահայտել գնումների գործընթացում ներգրավված մասնակիցների փոխկապակցված անձանց շրջանակը: Մշակվել են մասնակիցների վերաբերյալ այնպիսի տվյալներ, որոնք հիմք են հանդիսացել գնումների գործընթացում վերջիններիս որակավորելու և հետագայում հաղթող ճանաչելու համար:

Հաշվեքննիչ պալատի համար հասանելի է եղել նաև Համաշխարհային բանկի Client Connection էլեկտրոնային համակարգը, որն իրենից ներկայացնում է «բանկի աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գնումների էլեկտրոնային մոդուլ»: Համակարգից ստացված տվյալների մշակմամբ

համապատասխան հաշվեքննողներին տրվել է արժեքավոր տեղեկություններ ծրագրերի, շնորհված պայմանագրերի և այլ պայմանների վերաբերյալ:

ՀՀ-ում Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) պատվիրակությունը և «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը» (այսուհետև՝ ԳՄՀԸ) «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում տրամադրել են տեխնիկական աջակցություն հետևյալ ուղղություններով.

- Հաշվեքննիչ պալատի 10 աշխատակից 2018թ. մայիս-հունիս ամիսներին մասնակցել է «LS FINANCE» և «LS REP» գանձապետական համակարգերի վերապատրաստման դասընթացներին և հաղթահարել թեստային փուլը: Դասընթացներն անցկացրել են «Լսոֆթ» ընկերության մասնագետները վերապատրաստողների վերապատրաստում (training of trainers) սկզբունքով, ինչը նշանակում է, որ պալատի վերապատրաստված աշխատակիցները գանձապետական էլեկտրոնային համակարգերի վերաբերյալ գիտելիքները հետագայում կկարողանան առանձին դասընթացների միջոցով փոխանցել նաև Հաշվեքննիչ պալատի այլ աշխատակիցներին:

- Հաշվեքննիչ պալատի 30 աշխատակից վերապատրաստվել և տիրապետում է Microsoft Excel ծրագրային փաթեթին (խորացված մակարդակով):

- Ներգրավված փորձագետների աջակցությամբ իրականացվել է հաշվեքննություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների կողմից հաշվեքննության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը ապահովող գործընթացի նկատմամբ:

- «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի նախապայմանների շրջանակներում ներգրավված փորձագետների աջակցությամբ՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության 2017թ. ֆինանսական տարվա ֆինանսական փաստաթղթերի և հարակից ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվել է աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտներին (այսուհետև՝ ISSAI) համապատասխան ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն (հաշվեքննության օբյեկտի ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում կազմում է 17.5%-ից ավելի):

- Նախապես ընտրվել են նախորդ տարվանից տարբերվող ոլորտներ (դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթաց, ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության

դրամաշնորհային ծրագիր), որտեղ իրականացվել է ISSAI ստանդարտներին համապատասխան թվով երկու կատարողականի հաշվեքննություն:

- 2018թ. մայիսի 30-ին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) և ՀՀ հաշվեքննիչ պալատի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որը միտված է հզորացնելու Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության գործառույթը և օժանդակելու նրա բարեփոխումներին: Հուշագրի հիմքում դրված են համագործակցության երեք հիմնական ուղղություններ՝
 - Մասնագիտական կարողությունների զարգացում ԱՄՆ բարձրագույն աուդիտի մարմնի (US Government Accountability Office) փորձագետների ներգրավմամբ
 - SS ենթակառուցվածքների և վերլուծական կարողությունների զարգացում՝ դրանք օրենքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:
 - USAID կողմից ֆինանսավորվող միջկառավարական (G2G) ծրագրերի գործունեության հետագա ֆինանսական հաշվեքննության իրականացում:
- USAID օժանդակությամբ հզորացվել են Հաշվեքննիչ պալատի վերլուծական կարողությունները: Մասնավորապես,
 - IDEA Caseware ընկերության խորհրդատուի ներգրավմամբ ՀՀ հաշվեքննիչ պալատի 10 աշխատակից մասնակցել է IDEA վերլուծական ծրագրային փաթեթի դասընթացներին,
 - Հաշվեքննիչ պալատին տրամադրվել են 10 դյուրակիր համակարգիչ և IDEA ծրագրային փաթեթի 10 լիցենզիա:
- Հաշվեքննիչ պալատը, հանդիսանալով 1998թ.-ից՝ INTOSAI (բարձրագույն աուդիտի մարմինների միջազգային կազմակերպություն), 2000թ.-ից՝ EUROSAI (Եվրոպայի բարձրագույն աուդիտի մարմինների կազմակերպություն) և 2007թ.-ից՝ ASOSAI (Ասիայի բարձրագույն աուդիտի մարմինների կազմակերպություն) լիիրավ անդամ, ակտիվ մասնակցություն է ունեցել բազմակողմ (միջազգային և տարածաշրջանային նշանակության) մասնագիտական հարթակների աշխատանքներին և համատեղ միջոցառումներին:
- INTOSAI համայնքում Հաշվեքննիչ պալատը մասնակցում է ազգային առանցքային ցուցանիշների, պետական գնումների աուդիտի և բնապահպանական աուդիտի աշխատանքային խմբերի աշխատանքներին, իսկ EUROSAI համայնքում՝ ճգնաժամերի վերացմանն ուղղված օգնության աուդիտի և բնապահպանական աուդիտի աշխատանքային խմբերի աշխատանքներին: Հաշվեքննիչ պալատը դարձավ նաև EUROSAI-ի տեղեկատվական տեխնոլոգիաների աշխատանքային խմբի լիիրավ անդամ:

- 2000թ.-ից Հաշվեքննիչ պալատի նախագահը հանդիսանում է ԱՊՀ անդամ պետությունների աուդիտի բարձրագույն մարմինների ղեկավարների խորհրդի անդամ, որի մասնագիտական աշխատանքներում պալատը ևս ակտիվ մասնակցություն է ցուցաբերում:
- Երկկողմ համագործակցության շրջանակներում տեղի են ունեցել տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով մի շարք փոխադարձ այցեր: Մասնավորապես, ՀՀ հաշվեքննիչ պալատը համագործակցության նոր հուշագրեր է կնքել ՌԴ հաշվիչ պալատի, ինչպես նաև Վրաստանի պետական աուդիտի գրասենյակի հետ, ինչպես նաև պալատը Երևանում հյուրընկալել է Կորեայի Հանրապետության աուդիտի և տեսչական խորհրդի պատվիրակությանը, որի շրջանակներում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն առաջացնող համագործակցության մի շարք հարցեր:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզրահանգումներ

1. Հաշվեքննությամբ արձանագրված փաստերն ու ներկայացված առաջարկությունները կարող են արժեքավոր լինել թե՛ Ազգային ժողովի, թե՛ հանրության և թե՛ կառավարության համար հետագա հետևություններ անելու և դրանցով պայմանավորված նոր որոշումներ կայացնելու նպատակով:
2. Սույն տարեկան հաղորդումը տալիս է բավարար տեղեկատվություն Ազգային ժողովին և հանրությանը առ այն, որ Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացրել է օրինականության և տնտեսման, նպատակային ու ծախսային արդյունավետության սկզբունքների համաձայն:
3. Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունն ունի բարելավման անհրաժեշտություն, հատկապես նկատի ունենալով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներին համապատասխանության անհրաժեշտությունը:

Առաջարկություններ

Ազգային ժողովին.

1. Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և ներկայացված առաջարկությունների ընդունման և իրագործման գործընթացի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության լիազորությունների իրականացման ընթացքում բարելավել համագործակցությունը Հաշվեքննիչ պալատի հետ:
2. Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը բարելավել՝ նկատի ունենալով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով սահմանված ֆինանսական, գործառնական և կազմակերպչական անկախության հարցերը:

Կառավարությանը.

1. Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման և ներկայացված առաջարկությունների ընդունման և իրագործման գործընթացի նկատմամբ հսկողություն իրականացնելիս բարելավել համագործակցությունը Հաշվեքննիչ պալատի հետ:
2. Ուժեղացնել հաշվեքննության ընթացքում հաշվեքննության օբյեկտների ղեկավարների համար օրենքով սահմանված պարտականությունների կատարման

գործընթացի նկատմամբ հսկողությունը, հատկապես նկատի ունենալով, որ վերջիններս պարտավոր են.

- անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծել հաշվեքննողների գործունեության համար
- հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ
- հաշվեքննության ընթացքում անհապաղ տեղեկացնել հաշվեքննողին տրամադրված տեղեկատվության, փաստաթղթերի և գրանցումների ցանկացած փոփոխության և լրացումների մասին
- չխոչընդոտել հաշվեքննության ընթացքին, կատարել հաշվեքննողների օրինական պահանջները
- ապահովել հաշվեքննության առարկային առնչվող առկա էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն
- հետամուտ լինել հաշվեքննության օբյեկտների կողմից պալատի եզրակացություններից բխող միջոցառումների իրականացմանը:

3. Հիմք ընդունելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածներով կառավարության համար սահմանված իրավասությունները՝ Կառավարության համապատասխան որոշմամբ Հաշվեքննիչ պալատի համար սահմանել պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելով լիազորություն: